

2949.

Ի. ՍՏԱԼԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ
ՊԵՏԱԿԱՆ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ



ՀԱՅԿՈՒՍՀՐԱՅ • 1937 • ԵԵՐԵՎԱՆ

31K33

Q - 23

ՊՐՈԼԵՏԱՍՈՒՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

20 NOV 2009

3K35
Q-23 *մշ.*

Ի. ԱՍԱԼԻՆ

08 JUN 2005

ԱԶԳԱՅԻՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ՃԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Զեկուցում ԲԿ(թ)Կ XII համագումարում 1923 թ. ապրիլի 23-ին

2949



И. СТАЛИН
НАЦИОНАЛЬНЫЕ ЧАСТИ
В ПАРТИЙНОМ И ГОСУДАРСТВЕННОМ
СТРОИТЕЛЬСТВЕ

Аомпартизд т Ереван, 1937

Ընկերները : Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակից
սկսած մենք յերրորդ անգամն ե քննարկում ենք ազգային հարցը.
առաջին անգամը—VIII համադումարում, յերկրորդ անգամը—X և
յերրորդ անգամը—XII համագումարում։ Արդյոք սա նշան չէ՝
այն բանի, թե ինչ-վոր բան սկզբունքորեն փոխվել ե ազգային
հարցի մասին ունեցած մեր հայացքներում։ Վո՞չ, աղջային
հարցի վերաբերյալ սկզբունքային հայացքը նույն է մնացել,
ինչ վոր եր մինչեւ Հոկտեմբերը, և նրանից հետո։ Բայց X հա-
մագումարի ժամանակից սկսած փոխվել ե միջազգային իրազրու-
թյունը՝ հեղափոխության այն ծանր ուղղերթների տեսակարար
կշիռն ուժեղանալու իմաստով, վոր ներկայումս Արևելքի յեր-
կիրներն են ներկայացնում։ Սա՝ առաջինը։ Եերկրորդ, X համա-
գումարի ժամանակից սկսած մեր կրուսակցությունը ներկի կա-
պակցությամբ նույնպես ունեցել ե միջանի փոփոխություններ
ներքին գրության մեջ։ Այս բոլոր նոր գործոնները անհրաժեշտ
ե հաշվի առնել, տալ նրանց հանրագումարը։ Այս իմաստով կա-
րելի յե խոսել ազգային հարցի նոր գրման մասին XIII համա-
գումարում։

Աղջային հարցի միջազգային նշանակությունը։ Զեղ հայտնի յեւ, ընկերնե՛ր, վոր մենք հանդիսանում ենք, մենք վորպես խոր-հըրդային Փեղերացիա, պատմական բախտի կամքով ներկայումն հանդիսանում ենք Համաշխարհային Հեղափոխության առաջավոր ջոկատը։ Զեղ հայտնի յեւ, վոր համակապիտալիստական Փրունոր առողջին անդամ մենք ճեղեցինք՝ բախտի կամքով ամենքից առաջ դունվելով։ Զեղ հայտնի յեւ, վոր մեր առաջարժման ընթացքում մենք հասանք մինչև Վարչավա, իսկ հետո նահանջեցինք՝ ամրա-նալով այն դիրքերում, վոր մենք ամենից ամուր եյինք համա-րում։ Այդ մոմենտից սկսած մենք անցանք նեպին և այդ մոմեն-տից սկսած մենք Հաշվի առանք միջազգային հեղափոխական շարժման տեմպի դանդաղումը, այդ մոմենտից սկսած մեր քաղա-քականությունը դարձավ, արդեն վոչ թէ հարձակողական, այ-

զլաշտպանողական : Գնալ առաջ այն բանից հետո , յերբ մենք վարչավայրի մոտերքում անհաջողություն կրեցինք (ճշմարտությունը չթագցնենք) , գնալ առաջ մենք չեյինք կարող , վորովհետև մենք ուխսկ եյինք անում կարվել թիկունքից , իսկ այն մեղանում գյուղացիական ե , և , վերջապես , մենք ուխսկ եյինք անում չափազանց հեռու գնալ հեղափոխության այն ուղերձներից , վորտրված են բախտի կամքով՝ Արևմտյան ու Արևելյան ուղերձներից : Աչա թե ինչու մենք շրջադարձ ձեռնարկեցինք ներսում նեպի կողմը և դրանք՝ առաջշարժման դանդաղեցման կողմը՝ վրձռելով , վոր պետք ե շունչ առնել , բուժել մեր վերքերը ,— առաջալոր ջոկատի , պլոյետարիատի վերքերը , կոնտակտ ստեղծել գյուղացիական թիկունքի հետ , հետագա աշխատանք կատարել ուղերձների մեջ , վորոնք հետ են մնացել մեղնից ,— արևմտյան ուղերձների և արևելյան ծանր ուղերձների մեջ , վորոնք համաշխարհային կապիտալիզմի հիմնական թիկունքն են կազմում : Աղդպային հարցը քննարկելիս խոսքն ահա այս ուղերձների մասին ե , — ծանր , արևելյան ուղերձների մասին , վորոնք դրա հետ միասին համաշխարհային իմպերիալիզմի թիկունքն են կազմում :

Յերկուսից մեկը՝ կամ մենք խմբերիալիզմի խորը թիկունքը, — արևելյան գաղութային ու կիսագաղութային յերկիրները, — կշարժենք, կհեղափոխականացնենք և դրանով կարագացնենք իմպերիալիզմի անկումը, կամ մենք այստեղ կվրիպենք և դրանով կամրացնենք իմպերիալիզմը ու դրանով կթուլացնենք մեր շարժման ուժը։ Հարցը այսպես է դրված։

Բանն այն է, վոր ամբողջ Արևելքը Հանրապետությունների
մեր Միության վրա նայում է իրեւ փորձադաշտի վրա։ Կամ
մենք այս Միության շրջանակներում ճիշտ կլուծենք ազգային
հարցը՝ նրա գործնական կիրառման մեջ, կամ մենք այստեղ,
այս Միության շրջանակներում, կհաստատենք ժողովուրդների
միջև իսկապես յեղբայրական հարաբերություններ, իսկական
համագործակցություն, և այն ժամանակ ամբողջ Արևելքը կը-
տեսնի, վոր նա հանձին մեր Փեղերացիայի ազատադրության դը-
րոշ ունի, ունի առաջավոր ջոկատ, վորի հետքերով նա պետք է
դնա, և այդ կլինի համաշխարհային իմպերիալիզմի կրախի
սկիզբը։ Կամ թե՝ մենք այստեղ, ամբողջ Փեղերացիայի կազմի
մեջ սիալ թույլ կտանք, կիսախտենք առաջներում ճնշված ժողո-
վուրդների վստահությունը դեպի Ռուսաստանի պրոլետարիատը,
Հանրապետությունների Միությունը կղրկենք Արևելքի աչքում

Նրա ունեցած ձգողական ուժից, և այն ժամանակ կտանի իմպե-
րիալիզմը, տանուլ կտանք մենք:

Այս ե ազգային հարցի միջազգային նշանակությունը:

Ազգային հարցը մեղ համար նշանակություն ունի նաև ներքին դրության տեսակետից, վոչ միայն այն պատճառով, վոր թվական տեսակետից, նախկին պետական (դերյանայ) ազգը մոտ 75 միլիոն է, իսկ մնացած ազգերը՝ 65 (սա, այնուամենայնիվ, քիչ չե), և վոչ ել միայն այն պատճառով, վոր առաջներում ճնշված ազգերը դրավում են տնտեսական դարդացման համար ամենից ավելի հարկավոր շրջանները և ուղղմական ստրատեգիայի տեսակետից՝ ամենից ավելի կարևոր կետերը, —վոչ միայն այս պատճառով, այլ ամենից առաջ այն պատճառով, վոր այս յերկու տարրում մենք այսպես կոչված ներկ մտցրինք, իսկ սրա կապակցությամբ ուստական նացիոնալիզմն սկսեց աճել, ուժեղանալ, ծնվեց սմենովելիքականության գաղափարը, ցանկություններ են թափառում խաղաղ ճանապարհով անելու այն, ինչ չհաջողվեց անել Դենիկինին, այսինքն ստեղծել այսպես կոչված «միասնականը և անբաժանելին» :

Յեկ, այսպիսով, մեր ներքին կյանքում նեպի կապակցությամբ մի նոր ուժ է ծնվում—վելիկոռուսական շովինիզմը, վորը բուն և դրել մեր հիմնարկներում, թափանցում և վոչ միայն խորհրդային, այլև կուսակցական հիմնարկները, թափառում և մեր Փետքերացիայի բոլոր անկյուններում և տանում եղեղի այն, վոր յեթե մենք այդ նոր ուժին վճռական հակահարված չտանք, յեթե մենք արմատից չկտրենք այն—իսկ նեպական պայմաններն անեցնում են այդ ուժը,—մենք ոխոկ ենք անում կանգնելու նախկին պետական ազգի պրոլետարիատի և առաջներում ճնշված ազգերի գյուղացիների միջև կապերը խղվելու պատկերի առջև, —մի բան, վոր հավասար եղողետարիատի գիտատուրայի խարխըլ-ման:

Բայց նեպը աճեցնում է վոչ միայն ոռուսական շովինիզմ, նա աճեցնում է նաև տեղական շովինիզմներ՝ մանավանդ այն հանդիպեատություններում, վորոնք միքանի ազգություններ ունեն: Յես նկատի ունեմ Վրաստանը, Ալբրեջանը, Բուխարան, մասսամբ կարելի յե նկատի առնել Թուրքեատանը, վորտեղ մենք ունենք միքանի ազգություններ, վորոնց առաջալոր տարրերը, գուցե, շուտով ակսեն առաջնության համար կոնկրետենցիայի մեջ մտնել միմյանց դեմ: Այս տեղական շովինիզմները, իհարկե, իրենց ուժով այն վտանգը չեն ներկայացնում, ինչ վելիկուուսական շո-

վինիգմն և ներկայացնում : Բայց նրանք, այնուամենայնիվ, վտանգ են ներկայացնում՝ սպառնալով մեզ՝ միքանի հանրապետություններ դարձնել ազգային խառնակչության ասպարեզ, խալստել այնտեղ ինտերնացիոնալիզմի կապերը :

Սրանք են միջազգային ու ներքին բնույթի այն հիմքերը, վորոնք խոսում են ազգային հարցի կարևոր, առաջնակարգ նշանակության մասին՝ տոհասարակ և տվյալ մոմենտում՝ մանավանդ :

ի՞նչն ե աղդային հարցի դասակարգային եյությունը: Ի՞նչ է աղդային հարցը: Աղդային հարցի դասակարգային եյությունը փոխհարաբերությունները վորոշելն ե ,—յետ խոսում եմ մեր իրադրության մասին, խորհրդայինի մասին, —նախկին պետական աղդի պրոլետարիատի և նախկին ճնշված աղդությունների գյուղացիության ճիշտ փոխհարաբերությունները վորոշելը: Զողման հարցն այստեղ ամենի քան բավականաչափ քննարկվեց, բայց զողման հարցն ընկ. ընկ. Կամենեվի, Կալինինի, Սոկոլնիկովի գեկուցման կապակցությամբ, մինչև իսկ ընկ. Ռիկովի և ընկ. Տրոցկու գեկուցման կապակցությամբ քննարկելիս, այդ քննարկման ժամանակ նկատի յեր առնվում գլխավորապես ոռուս պրոլետարիատի վերաբերմունքը գեպի ոռուս գյուղացիությունը: Այստեղ, աղդային բնագավառում, մենք ամենի բարդ մեխանիկա ունենք: Այստեղ մենք գործ ունենք նախկին պետական աղդին պատկանող և մեր ամբողջ ֆեղերացիայի պրոլետարիատի ամենակուլտուրական խավը հանդիսացող պրոլետարիատի ու գյուղացիության՝ առավելապես առաջներում ճնշված աղդությունների գյուղացիության միջև, ճիշտ փոխհարաբերություններ հաստատելու հարցի հետ: Այս ե աղդային հարցի դասակարգային եյությունը: Յեթե պրոլետարիատին հաջողվի այլաղդի դրույցի կիության հետ հաստատել այնպիսի հարաբերություններ, վորոնք կարողանան խարիսկել ամեն մի ոռուսական բանի նկատմամբ յեղած այն անվաստահության մնացուկները, վոր ցարիդմի քաղաքականությամբ տասնյակ տարիներով սնուցվում ու արմատավորվում եր,—ամենին՝ յեթե ոռուս պրոլետարիատին հաջողվի հասոցներ լինակատար փոխաղարձ ըմբոնման ու փոտահության, իրական միություն հաստատել վոչ միայն ոռուս պրոլետարիատի ու ոռուս գյուղացիության միջև, այլև ոռուս պրոլետարիատի ու այլ աղդությունների գյուղացիության միջև, ապա խնդիրը լուծված կլինի: Մրա համար անհրաժեշտ ե, վորսկեովի պրոլետարիատի իշխանությունն այլաղդի գյուղացիության համար նույնքան հարազատ լինի, վորքան ոռուս գյուղացիության համար ե:

«Ղորպկեսզի խորհրդային իշխանությունն այլազգի գյուղացիության համար ել հարազատ դառնա՝ անհրաժեշտ ե, վոր այդ իշխանությունը նրա համար հասկանալի լինի, վոր այն մայրենի լեզվով գործի, վոր դպրոցներն ու իշխանության մարմինները կառուցվեն լեզուն, բարքերը, սովորույթները, կենցաղն իմացող տեղացիներից։ Խորհրդային իշխանությունը, վոր մինչև վերջին ժամանակներս ոռուսական իշխանություն ե հանդիսացել, միայն այն ժամանակ և միայն այնքան կլինի վոչ միայն ոռուսական, այլև միջազգյան (մеждунациональная), առաջներում ձնշված ազգությունների դյուլացիների համար հարազատ, յերբ այդ յերկիրների հանրապետություններում հիմնարկներն ու իշխանության մարմինները կիսուն ու կգործեն մայրենի լեզվով։ Այս ե աղքա-յին հարցի հիմքերից մեկը՝ առհասարակ, խորհրդային իրադրության մեջ՝ մանավանդ։

Վ՞ո՞րն ե ազգային հարցի լուծման բնորոշ դիմումը տվյալ մո-
ժենատում, 1923 թվականին։ Ազգային գծով լուծում պահանջող
հարցերը ի՞նչ ձև են ընդունել 1923 թվականին։ Մեր Փեղերա-
ցիայի ժողովուրդների միջև տնտեսական գծով, ռազմական
գծով, քաղաքական գծով համագործակցություն հաստատելու
ձև։ Յես նկատի ունեմ միջազգյան հարաբերությունները։ Ազ-
գային հարցը, վորի հիմքը կազմում ե նախկին պետական ազգի
պրոլետարիատի և այլազդի գյուղացիության միջև ճիշտ հարա-
բերություններ հաստատելու խնդիրը, տվյալ մոմենտում ընդու-
նում ե այն ժողովուրդների համագործակցության ու յեղբայրա-
կան համակեցության առանձին ձև, վորոնք առաջներում ան-
ջատված ենին և վորոնք այժմ միավորվում են միասնական պե-
տության ըրջանակներում։ Ահա ազգային հարցի եյությունն այն
ձևով, ինչ ձև նա ընդունել է 1923 թվականին։ Պետական այդ
միավորման կոնկրետ ձևը Հանրապետությունների այն Միու-
թյունն է, վորի մասին մեծք խոսեցինք խորհուրդների համա-
գումարում տակավին անցյալ տարվա վերջերին, և վորը մենք
այն ժամանակ հիմնադրեցինք։

Այդ միության հիմքը՝ Միության անդամների կամավորությունն ու իրավական հավասարությունն են: Կամավորությունն ու հավասարությունը՝ այն պատճառով, վոր մեր աղբային ծրագրի յելակետն ազգությունների ինֆուրույն պետական գոյության իրավունքի կետն եւ—այն, ինչ առաջներում ինքնորոշման իրավունք եր կոչվում: Յենելով սրանից՝ մենք վորոշակի պետք ե ասենք, վոր ժողովուրդների վոչ մի միություն, ժողովուրդների

վոչ մի միավորում իրեն միասնական պետություն չի կարող հաստատուն լինել, յեթե նա հիմնված չէ լիակատար կամավորության վրա, յեթե ավյալ ժողովուրդը, յեթե ժողովուրդներն իրենք չեն ուզում միավորվել: Յերկրորդ հիմքը՝ Միության կաղամի մեջ մտնող ժողովուրդների իրավական հավասարությունն եւ Յել այդ հասկանալի յե: Յես չեմ խոսում փաստական հավասարության մասին, այս մասին յես հետազյում կամեմ, վորովհետև առաջ անցած ազգությունների ու հետամնաց ազգությունների միջև փաստական հալասարություն հաստատելը շատ բարդ, շատ ծանր, մի շարք տարիներ պահանջող գործ ե: Յես այստեղ իրավական հավասարության մասին եմ խոսում: Այստեղ հավասարությունը նրանով ե արտահայտվում, վոր բոլոր հանրապետությունները, ավյալ գեղգում չորս հանրապետություն՝ Անդրկովկասը, Բելոռուսիան, Ռուսաինան ու ՌՍՖՌՀ, վորոնք Միության կազմի մեջ են մտնում, միենույն չափով են սդափում Միության բարիքներից և միաժամանակ հոգուտ Միության միենույն չափով են համարվում անկախության իրենց փորչ իրավունքներից: Յեթե արտգործժողկոմատ չեն ունենալու ՌՍՖՌՀ, Ռուսաինան, Բելոռուսիան, Անդրկովկասը հանրապետությունը, ապա պարզ ե, վոր այս արտգործժողկոմատները վերացնելիս և Հանրապետությունների Միության մեջ ընդհանուր արտգործժողկոմատ ստեղծելիս տեղի կունենա վորոշ սահմանափակում այն անկախության, վոր ունեցել են այդ հանրապետությունները և վորը Միության մեջ մտնող բոլոր հանրապետությունների համար հալասարաշախ ե սահմանափակվել: Պարզ ե, վոր, յեթե այդ հանրապետություններն առաջնարում իրենց արտառժողկոմատներն են ունեցել, իսկ այժմ այդ արտառժողկոմատները վերացվում են՝ ինչպես ՌՍՖՌՀ մեջ, այնպես ել մյուս հանրապետություններում՝ Հանրապետությունների Միության կից ընդհանուր արտառժողկոմատ ստեղծելու համար, ապա այստեղ ևս տեղի յե ունենում այն անկախության վորոշ սահմանափակումը, վորը առաջ լիակատար ձեռվ կար և վորը այժմ կրճատվել ե՝ հոգուտ ընդհանուր Միության և այլն և այլն: Վոմանք զուտ սխոլաստիկ հարց են տալիս. իսկ թօնչ ե, միավորումից հետո հանրապետությունները անկա՞խ են մնում արդյոք: Այդ սխոլաստիկ հարց ե: Նրանց անկախությունը սահմանափակվում ե, վորովհետև ամեն մի միավորում առաջներում յեղած իրավունքների մի փորչ սահմանափակում ե նրանց վերաբերմամբ, ողջեր միավորվել են: Բայց այստեղ անկախության

տարրերը մնում են, անպայման, յուրաքանչյուր հանրապետության նկատմամբ, վորովճետել յուրաքանչյուր հանրապետությունն Միության կազմից միակողմանիուրեն դուրս դալու իրավունք ունի: Այս թե վորոնք են անկախության տարրերը, ահա պոտենցիալայում անկախության այն մաքսիմումը, վորը մնում է Միության մեջ մտնող հանրապետություններից յուրաքանչյուրի համար և վորը նա միշտ կարող է իրականացնել:

Այսպես ուրեմն, մեր իրադրության մեջ տվյալ մոմենտում աղքային հարցի կոնկրետ ձևը հանդել է ժողովուրդների տնտեսական, արտաքին-քաղաքական և ռազմական համագործակցություն սահմանելու հարցին։ Մենք պետք են այս հանրապետությունները այս գծերով միավորենք իրենք միասնական միություն, որը կոչվում է ԽՍՀՄ։ Տվյալ մոմենտում սրան են հանդել աղքային հարցի կոնկրետ ձևերը։

Բայց հեքիաթը հեշտ և ասլում, սակայն դործը շուտ էր

Բանն այն է, վոր մենք մեր իրադրության մեջ ունենք մի ոմբողջ շարք գործուներ, վորոնք վոչ միայն նպաստում են ողուժուրդների իրակ մի պետություն միավորվելուն, այլև արելակում են այդ միավորումը:

Աջակցող գործոնները ձեզ հայտնի յեն. ամենից առաջ ժողովուրդների տնտեսական մերձեցումը, վորը հաստատվել է դեռև մինչև խորհրդային իշխանությունը և ամրապնդված է խորհրդային իշխանության կողմից, ժողովուրդների միջև աշխատանքի վորոշ բաժանումը, վորը հաստատվել է մեղանից առաջ և մրապնդվել է մեր կողմից, խորհրդային իշխանության կողմից, —դա մի հիմնական գործոն է, վորը նպաստում է հանսպեսությունների իրրե Միություն միավորվելուն։ Միավորանը նպաստող յերկրորդ գործոն պետք է համարվել խորհրդային խանության բնությունը։ Այս հասկանալի յէ։ Խորհրդային իշխանությունը բանվորների իշխանություն է, պրոլետարիատի կտասուրա, վորն իր բնությամբ տրամադրում է, վոր Միության մեջ մտնող հանրապետությունների ու ժողովուրդների աշխատավոր մասսաները բարեկամաբար տրամադրվեն միմյանց տոմամք։ Այս հասկանալի յէ։ Յեկը յերրորդ գործոնը, վոր ակցում է միավորմանը, դա խմբերի համար միասնական շրջապատճենն վորն այն միջավայրն է, վորի պայմաններում հարկ է լինուած ոծելու հանրապետությունների Միությանը։

Բայց կան և այսպիսի գործուներ, վորոնք խանդարում են

այդ միավորմանը, արգելակում են այդ միավորումը։ Հանրապետությունների իրեք միասնական միություն միավորվելու դորւ ծըն արգելակող հիմնական ուժը՝ լա այն ուժն ե, վոր աճում և մեզանում, ինչպես յես ասացի, նեղի պայմաններում։ Դա վեգիկոռուսական շովինիզմն է։ Բնավ ել պատահականություն չե, ընկերներ, վոր սմբենովեխականները¹) բազմաթիվ կողմնակիցներ են ձեռք բերել խորհրդային պաշտոնյաների մեջ։ Դա բնավ պատահականություն չե։ Պատահականություն չե և այն, վոր պարոն սմբենովեխականները գովում են կոմունիստ-բոլշևիկներին, կարծես թե ասելով՝ ինչքան կամենաք խոսեցեք բոլշևիդի մասին, ինչքան կամենաք շաղակրատեցեք ձեր ինտերնացիոնալիստական տենդենցիների մասին, իսկ մենք հո գիտենք, վոր այն, ինչ չհաջողվեց անել Դենիկինին, այն դուք կանեք, վոր մեծ Ռուսաստանի մեծ դադաֆարը դուք, բոլշևիկներդ, վերականգնեցիք կամ թե չե դուք, համենայն դեպս, կիերականգնեք այս։ Այս ամենը պատահականություն չե։ Պատահականություն չե նաև այն, վոր այս գաղափարը թափանցել ե նույնիսկ մեր միջանի կուսակցական հիմնարկները։ Եես ականատես եյի այն բանին, թե ինչպես վետրվարյան պլենումում, վորտեղ առաջին անգամ դրվում եր յերկրորդ պալատի հարցը, կենտկոմի կազմում լավում եյին կոմունիզմին չհամապատասխանող ճակարտ, ճառակար, վորոնք ընդհանուր վոչինչ չունեն ինտերնացիոներ, ճառակար, վորոնք ընդհանուր վոչինչ չունեն ինտերնացիոնացիական ե, համաձարակի ե։ Այս ամենը ժամանակի նշան ե, համաձարակի նշան ե,

Այստեղից բղխող հիմնական վտանգը՝ դա այս վրայութեան վորը բղխում է նրանից, թէ նեալի կապակցությամբ վոչ թէ ովեցոր, այլ ժամեժամ մեզանում աճում է մեծապեսական շովիրեցոր, առենակարծրացած նացիոնալիզմը, վորը ջանում է ջնջել նիզմը, առենակարծրացած նացիոնալիզմը, վորը ջանում է ջնջել

1 Սմենովիլիականուրյունը մի հոսանք է, վոր 1921 թ. Տաղել և արտա-
սահմանում սուսական սպիտակ-դպրոցիական եմիգրացիայի մեջ առավելա-
պես նրա ինտելիգենտական խավերում՝ Ն. Վ. Ռաստրյալովի և այլոց գլուխ-
վորությամբ, վորոնք Հրատարակեցին «Ըմենա ԵՎ» ժողովածուն և ամելի
ուշ Հրատարակում ելլին նույն անունը կրող ժուռանիւն՝ Նոր բուրժուազիան այն
ժամանակի, նեպին անցնելիս, առաջադրեց իր «ամենովիխական գաղափարախո-
սությունը, վորի ելությունն այն եր, թե կոմունիստական կուսակցությունը
պետք է վերասերվի, իսկ նոր բուրժուազիան պետք է կօնսուլետացիայի յեն-
թառք մի վերասերվի, ըստ ամենի անհատելի կերպով, մենք, բոլշևիկներս,
թարգիկի, ըստվարում՝ մեզ համար անհատելի կերպով, մենք, բոլշևիկներս,
բանից զուրս ե գտիսա, պետք ե մոտենանք գենովկատիկ հանրապետության
չեմքին...» (Ստալին):

Կուսակցությունը մերկաց
նովելականությունը :—Խմբ :

բոլոր վոչ-ռուսականը, կառավարման բոլոր թելերը հավաքել ուռւսական սկզբունքի շուրջը և ճնշել վոչ-ռուսականը։ Հիմնական վրանդն այն է, փոր այսպիսի քաղաքականություն վարելով մենք ուսկել ենք անում կորցնելու նախկին ճնշված ժողովուրդների կողմից գեղի ռուսական պրոլետարները յեղած այն վստահությունը, վոր նրանք ձեռք են բերել հոկտեմբերյան սրերին, յերբ ռուս պրոլետարները տապալեցին կալվածատերերին, ռուս կապիտալիստներին, յերբ նրանք, ռուս պրոլետարները, խորտակեցին ազգային ճնշումը, դուրս հանեցին զորքերը Պարսկաստանից, Մոնղոլիայից, Հոչչակեցին Ֆինլանդիայի, Հայաստանի անկախությունը և առհասարակ ազգային հարցը դրին միանդամայն նոր Հիմքերի վրա։ Այն վստահությունը, վոր մենք այն ժամանակ ձեռք բերինք, մենք կարող ենք կորցնել մինչև վերջին մասշորդները, յեթե ամենքս զինվենք այդ նոր, կրկնում եմ, վելիկոսուսական շովինիզմի դեմ, վորը անձնորեն, անկերպարան սողում եկաթիլ առ կաթիլ ներծծվելով մեր աշխատողների ականջներն ու չչերը, կաթիլ առ կաթիլ փոխելով նրանց վոգին, ամբողջ Հույն՝ այնպես, վոր քիչ ե մնում բոլորովին չճանաշես այդ աշխատողներին։ Աչա այս վտանգն ե, ընկերնե՛ր, վորի մեջքը մենքնչ ել վոր լինի պետք ե կոտրենք, այլապես՝ մեզ սպառնում և տաջներում ճնշված ժողովուրդների բանվորների ու գյուղացիների վստահությունը կորցնելու հեռանկարը, մեզ սպառնում երդ ժողովուրդների և ռուսական պրոլետարիատի միջև յեղածապի խզման հեռանկարը, և դրանով իսկ մեզ սպառնում է մեր իմաստուրայի սիստեմում մի ինչ-վոր ճեղք բույլ տալու վը-անդը։ Զմոռանաք, ընկերնե՛ր, վոր յեթե մենք պարզված դրոշերով եյինք զնում կերենսկու դեմ և զցեցինք Ժամանակաշրոր սուսպիրությունը, ապա, իմիջի այլոց, նրանից եր, վոր այն-եղ թիկումքում մենք ունեինք այն ճնշված ժողովուրդների ստահությունը, վորոնք ազատագրություն եյին ակնկալում ու պրոլետարներից։ Զմոռանաք այնպիսի ոեզերվների մասին, չպես ճնշված ժողովուրդներն են, վորոնք լուռ են, բայց իրենց ությամբ ճնշում ու վճռում են շատ բան։ Հաճախ այդ չի ացվում, բայց նրանք, այդ ժողովուրդները, ապրում են, նրանք կան, և նրանց մասին մոռանալ չի կարելի։ Այո՛, ընկերնե՛ր, վտանգավոր ե նրանց մասին մոռանալը։ Զմոռանաք, վոր թե մենք կոչչակի, Դենիկինի, Վրանգելի ու Յուդենիչի թիկում չունենայինք այսպես կոչված «այլազգիներին», չունայինք առաջներում ճնշված ժողովուրդներին, վորոնք դեպի

ոռուս պրոլետարները տածած իրենց լուս համակրանքով քայլքայ-
յում ելին այդ գեներալների թիկունքը, —ընկերնե՛ր, սա մի ա-
ռանձին գործոն ե մեր զարդացման մեջ, —լուս համակրանքը,
այն վոչ չի տեսնում ու չի լսում, բայց այն վճռում և ամեն
ինչ, —յեթե այդ համակրանքը չիներ՝ մենք այդ գեներալներից
վոչ մեկին դեն չելինք շպրտի: Այն ժամանակ, յերբ մենք նրանց
վրա ելինք զնում, նրանց թիկունքում սկսվեց փլուզումք: Ին-
չո՞ւ: Վորովհետեւ այդ գեներալները հենվում ելին կաղակ-կոլո-
նիզատորական տարրերի վրա, նրանք ճնշված ժողովուրդների
առաջ զծում ելին վերջիններիս հետագա ճնշման հեռանկար, և
ճնշված ժողովուրդներն ստիպված ելին մեր գիրկը դաշ, մինչդեռ
մենք պարզում ելինք այդ ճնշված ժողովուրդների ազատազըր-
ման գրոշը: Ահա թե ինչը վճռեց այդ գեներալների բախտը,
ահա այն գործոնների գումարը, վորոնց մեր զորքերի հաջողու-
թյուններն ստվերի տակ են թողել, բայց վորոնք վերջին հաշվով
վճռել են ամեն ինչ: Այս չի կարելի մոռանալ: Ահա թե ինչու
մենք պետք ե կտրուկ շրջադարձ կատարենք շովինիստական նոր
տրամադրությունների դեմ պայքարելու իմաստով և անարդանքի
սյունին զամենք մեր հիմնարկների այն պաշտոնյաններին և այն
կուտակցական ընկերներին, վորոնք մոռանում են Հոկտեմբերին
ունեցած մեր նվաճման մասին, այն ե՝ առաջներում ճնշված ժո-
ղովուրդների վստահության մասին, վորը մենք պետք ե թանդ
գնահատենք:

Այս ե առաջին և ամենավտանգավոր գործոնը, վորն արգե-
լակում ե ժողովուրդների և հանրապետությունների իրեն միաս-
նական միություն միավորվելու գործը: Պետք ե հասկանալ, վոր
յեթե մի այսպիսի ուժ, ինչպիսին վելիկոուսական շովինիզմն ե,
փարթամորեն ծաղկի ու տարածվի, —առաջներում ճնշված ադ-
դերի կողմից վոչ մի վստահություն չի լինի, վոչ մի համադրու-
ծակցություն միանական միության մեջ մենք չենք կառուցի և
հանրապետությունների վոչ մի Միություն մենք չենք ունենա:

Յերկրորդ գործոնը, ընկերնե՛ր, վոր նույնպես արգելք ե
լինում առաջներում ճնշված ժողովուրդների միավորմանը ուու-
սական պրոլետարիատի շուրջը, դա այն փաստական անհավա-
տարությունն ե, վոր մենք ցարիզմի շրջանից ենք ժառանգել:

Իրավական հավասարություն մենք հռչակել ենք և կիրա-
ռում ենք, բայց իրավական հավասարությունից, վորն ըստին-
ուում ենք, բայց իրավական հավասարությունից, վորն իսրա-
քյան մեծագույն նշանակություն ունի խորհրդային հանրապե-
տությունների զարդացման պատմության մեջ, մինչև փաստա-

կան հավասարությունը, այնուամենայնիվ, հեռու յէ: Մեր ֆե-
ղերացիայի կազմի մեջ հետ մնացած բոլոր ազգություններն ու
բոլոր ցեղերը Փորմալ կերպով նույնքան իրավունքներ ունեն,
ինչքան և մյուս, առաջ անցած ազգությունները: Բայց դժբախ-
տությունն այն ե, վոր ազգություններից վոմանք չունեն իրենց
պրոլետարները, արդյունաբերական զարգացում չեն ապրել,
նույնիսկ չեն ել սկսել, կուլտուրապես սոսկալի հետ են մնացել
և միանդամայն անդոր են ոգտագործելու այն իրավունքները,
վոր նրանց ընձեռել ե հեղափոխությունը: Այս, ընկերնե՛ր, ավելի
կարեոր հարց ե, քան դպրոցների հարցը: Այստեղ մեր ընկերնե-
րից վոմանք կարծում են, վոր ցայտուն կերպով առաջին պլանի
վրա զնելով դպրոցների ու լեզվի հարցը՝ հենց դրանով կարելի
յե հանդույցը կտրտել: Ճիշտ չե, ընկերնե՛ր, այստեղ դպրոց-
ներով շատ հեռուն չես գնա, դրանք, հենց այդ դպրոցները,
զարդանում են, լեզուն նույնպես զարդանում ե, բայց փաստացի
անհավասարությունը, այս ե բոլոր դժգոհությունների ու բաղ-
խումների հիմքը: Այստեղ դպրոցներով ու լեզվով չես պրծնի,
այստեղ հարկավոր ե մեր իրական, սիստեմատիկ, անկեղծ, իս-
կական պրոլետարական ոգնությունը կուլտուրապես ու տնտեսա-
պես հետամնաց ազգությունների աշխատավոր մասսաներին:
Անհրաժեշտ ե, վոր բացի դպրոցներից ու լեզվից, ուսուաստա-
նայան պրոլետարիատը ձեռք առնի բոլոր միջոցները, վորպեսզի
ծայրամասերում, կուլտուրապես հետ մնացած հանրապետու-
թյուններում, —իսկ նրանք իրենց մեղքով չե, վոր հետ են մնա-
ցել, այլ այն պատճառով, վոր առաջներում նրանց դիտում ելին
իբրև հումքի աղբյուրներ, —անհրաժեշտ ե հասնել այն բանին,
վոր այդ հանրապետություններում արդյունաբերության ոջախ-
ներ ստեղծվեն: Այս ուղղությամբ միքանի փորձ արված ե: Վը-
րաստանը վերցը ել Մոսկվայից մի գործարան, և վերջինս,
յերեկի, մոտ ժամանակներս կսկսի բանել: Բուխարան վերցը ել ե
մի գործարան, իսկ կարող եր չորս գործարան վերցնել: Թուր-
քեստանը մի մեծ գործարան ե վերցնում, և այսպիսով, բոլոր
տվյալները կան, վոր անտեսապես հետ մնացած և պրոլետա-
րիատ չունեցող այդ հանրապետությունները ուուս պրոլետարիա-
տի ոգնությամբ իրենց մոտ պետք ե հիմնեն արդյունաբերության
ոջախներ, թեկուզ փոքրիկ ոջախիկներ՝ նրա համար, վորպեսզի
այդ ոջախիկներում լինեն տեղացի պրոլետարների խմբեր, վո-
րոնք կարողանան ծառայել իբրև հաղորդակցության կամրջակ՝
ուուս պրոլետարներից ու դյուղացիներից գեպի այդ հանրապե-

տությունների աշխատավոր մասսաները։ Ահա այս բնագավառ-
ում հարկավոր է, վոր մենք լուրջ աշխատենք, և այստեղ միայն
դպրոցներով ու լեզվով չեմ պրծնի։

Բայց կա նաև մի յերրորդ գործում, վորն արգելակում է
Հանրապետությունների միավորումը իբրև մի միություն, — դա
նացիոնալիզմն է առանձին հանրապետություններում։ Նեպը աղ-
դում է վոչ միայն ոռու, այլև վոչ-ոռու բնակչության վրա։
Նեպը մասնավոր առևտուր ու արդյունաբերություն է զարդաց-
նում վոչ միայն Ռուսաստանի կենտրոնում, այլև առանձին հան-
րապետություններում։ Ահա հենց այս իսկ նեպը և նրա հետ
կապված մասնավոր կապիտալը սնում, աճեցնում են վրացական,
աղբեջանական, ուղբեկական և այլ նացիոնալիզմ։ Հարկավ,
յեթե չլիներ վելիկոուսական չովինիզմը, վորը հարձակողական-
է, վորովհետեւ այն ուժեղ է, վորովհետեւ այն պուած ել ուժեղ է
յեղել ու ճնշելու և նվաստացնելու նրա սովորքները մնացել են, —
յեթե վելիկոուսական չովինիզմը չլիներ, ապա թերևս, տեղա-
կան չովինիզմը իբրև պատասխան վելիկոուսականի, գոյություն-
ունենար այսպես առած՝ մինիմալ ու մինյատուր կերպով, վո-
րովհետեւ, վերջին հաշվով, հակառուսական նացիոնալիզմը
պաշտպանողական ձեւ է, պաշտպանության մի վորոշ այլանդակ
ձեւ է՝ ընդդեմ ոռուսական նացիոնալիզմի, ընդդեմ ոռուսական չո-
վինիզմի։ Յեթե այդ նացիոնալիզմը միայն պաշտպանողական
լիներ, ելի կարելի կլիներ նրա պատճառով աղմուկ չբարձրաց-
նել։ Կարելի կլիներ գործողությունների ամբողջ ուժը և պայքա-
րի ամբողջ ուժը կենտրոնացնել վելիկոուսական չովինիզմի
գեմ։ Հույս ունենալով, թե հենց վոր տապալիք այս ուժեղ թշր-
սամին, ապա սրա հետ միասին կտապալիք նաև հակառուսական
նացիոնալիզմը, վորովհետեւ նա, այդ նացիոնալիզմը, կրկնում
եմ, վերջին հաշվով ունեակցիա յե վելիկոուսական նացիոնալիզ-
մի հանդեպ, պատասխան է նրան, վորոշ պաշտպանություն է։
Այս՝ սա այսպես կլիներ, յեթե տեղերում հակառուսական նա-
ցիոնալիզմը ոռուսական նացիոնալիզմի հանդեպ ունեակցիա լինե-
լուց դենը չփնար։ Բայց դժբախտությունն այն է, վոր միջանի
հանրապետություններում պաշտպանողական այդ նացիոնալիզմը
դառնում է հարձակողական։

Վերցնենք Վրաստանը։ Այսուղ 30%-ից ավելի վոչ վրացա-
կան բնակչություն կա։ Դրանց թվում են՝ հայերը, արխագները,
աջարացիները, ոսերը, թաթարները։ Գլուխ են կանդնած վրա-
ցիները։ Վրացի կոմունիստների մի մասում ծնդել և դարձնում

է մի գաղափար—շատ ել հաշվի չնստել այդ մանր ազգություն-
ների հետ։ Նրանք պակաս կուլտուրական են, իբրև թե՛ պակաս
զարդացած են, ուստի նրանց հետ կարելի յե հաշվի չնստել։ Դա
չովինիզմ ե—վնասակար ու վտանգավոր չովինիզմ, վորովհետեւ
նա կարող է վրացական փոքրիկ հանրապետությունը մերածել
խառնակչության ասպարեզի և նա արդեն իսկ խառնակչության
այդպիսի ասպարեզ է դարձրել այն։

Աղբբեջանը։ Հիմնական ազգությունը աղբբեջանականն է,
բայց այնտեղ կան նաև հայեր։ Աղբբեջանցիների մի մասի մեջ
նույնպես կա այսպիսի, յերբեմն շատ ել չքողարկված, տենդենց
այն նյութի մասին, թե մենք, գիտեք ինչ, աղբբեջանցիներ
ենք, — բնիկներ, իսկ նրանք, հայերը, — յեկվորներ են։ Քանի
վոր այլպես է, արդյոք չի՞ կարելի նրանց մի քիչ հետ մղել,
հաշվի չնստել նրանց շահերի հետ։ Սա նույնպես չովինիզմ է։
Սա խախտում է ազգությունների այն հավասարությունը, վորի
հիման վրա կառուցվում է խորհրդային իշխանությունը։

Բուխարան։ Այնտեղ, Բուխարայում, յերեք ազգություն կա.
ուղբեկները—հիմնական ազգությունը, թուրքմենները՝ բուխարա-
կան չովինիզմի տեսակետով՝ «պակաս կարեւոր» ազգություն, և
կիրգիզները։ Այնտեղ նրանք քիչ են, և նրանք «պակաս կարեւոր են»։

Խորեղմում նույն բանն է։ Թուրքմեններն ու ուղբեկները:
Ուղբեկները հիմնական ազգությունն են, իսկ թուրքմենները՝
«պակաս կարեւորը»։

Այս ամենը տանում է դեպի կոնֆլիկտներ, դեպի խորհրդա-
յին իշխանության թուրքումը։ Այս հակումը դեպի տեղական
չովինիզմը նույնպես պետք է արմատում խափանել։ Իհարկե,
տեղական չովինիզմը, համեմատած վելիկոուսական չովինիզմի
հետ, վորը ազգային հարցի ընդհանուր սիստեմում կազմում է
ամբողջի յերեք քառորդը, այնքան կարեւոր չե, բայց տեղական
աշխատանքի համար, տեղացիների համար, հենց ազգային հան-
րապետությունների խաղաղ զարգացման համար այս չովինիզմը
առաջնակարգ նշանակություն ունի։

Այս չովինիզմը յերեմն սկսում է յենթարկվել շատ հետա-
քըրքարական ելլուցիայի։ Յես նկատի ունեմ Անդրկովկասը։
Դուք դիտեք, վոր Անդրկովկասը բաղկացած է յերեք հանրապե-
տություններից, վորոնք իրենց կազմում տասը ազգություն ու-
նեն։ Անդրկովկասը վաղ ժամանակներից հանդիսացել է կոտո-
րածի ու խառնակչության ասպարեզ, իսկ հետո, մենշենիների
ու նացիոնալիստների որով՝ պատերազմի ասպարեզ։ Դուք գի-

անք վրացահայկական պատերազմը։ 1904 թվականի սկզբի ու 1905 թվականի վերջի կոտորածը ճեղ նույնպես հայտնի յէ։ Յես կարող եմ մի շարք շրջանների անուններ տալ, վորտեղ մեծամասնություն կազմող հայերը կոտորել են բնակչության ամբողջ մնացած մասը, վոր բաղկացած ե թաթարներից, —որինաև, Զանգեզուրը։ Կա մի այնպիսի մարզ, վորտեղ մեծամասնությունը հայեր են, և այնտեղ նրանք կոտորել են բոլոր թաթարներին։ Կարող եմ մատնանշել մի ուրիշ գավառ—Նախիջևանը։ Այնտեղ գերազանցող թաթարներն են յեղել, և նրանք կոտորել են բոլոր հայերին։ Դա յեղել ե իմակերիալիդմի լծից Հայաստանի ու Վրաստանի ազատավավելուց հենց առաջ։ (Մի ճայն տեղից. «Իրենց ձեռով են լուծել ազգային հարցը»)։ Իհարկե այդ ել ազգային հարցի լուծման վորոշ ձե է։ Բայց այդ՝ լուծման խորհրդային ձև է։ Փոխադարձ ազգային թշնամանքի այս իրադրության մեջ, իհարկե, ուստաները զեր չունեն, վորովհետեւ կովում են թաթարներն ու հայերը, առանց ուստանքի։ Ահա թե ինչո՞ւ Անդրկովկասում հարկավոր ե մի հատուկ մարմին, վորը կարողանար կարգավորել փոխհարաբերություններն ազգությունների միջև։ Համարձակ կարելի յե ասել, վոր նախկին պետական Ռուսաստանի պրոլետարիատի և մնացած բոլոր ազգությունների աշխատավորների փոխհարաբերությունները կազմում են ազգային ամբողջ հարցի յերեք քառորդը։ Բայց այս հարցի մի քառորդը պետք ե բաժին թողնել իրենց, առաջներում ճնշված ազգությունների փոխհարաբերություններին։

Յենէլ ահա՝ փոխադարձ ամվաստահության այս պայմաններում, յեթե վոր խորհրդային իշխանությունն Անդրկովկասում չկարողանար ստեղծել ազգային խաղաղության մի մարմին, վորը կարողանում ե հարթել բաղկաստներն ու կոնֆլիկտները, մենք կվերադասնայինք ցարիզմի դարաշրջանին կամ դաշնակների*, մուսավաթականների*, մենշևիկների դարաշրջանին, յերբ մարդիկ հրդեհում ու կոտորում ենին իրար։ Ահա թե ինչու կենակոմը յերից հաստատել ե Անդրկովկասյան Ֆեղերացիայի՝ վորպես ազգային խաղաղության որդանի՝ պահպանության անհրաժեշտությունը։

Այստեղ յեղել ե և մնում ե վրացի-կոմունիստների մի խումբ, վորը չի առարկում այն բանի դեմ, վոր Վրաստանը միավորվի Հանրապետությունների Միության հետ, բայց առարկում ե այն բանի դեմ, վոր այդ միավորումը տեղի ունենա Անդրկովկասյան

Ֆեդերացիայի միջոցով։ Նրանք, դուք տեսնո՞ւմ եք, ուզում են Միությանն ավելի մոտիկ լինել, թե իրը հարկավոր չէ Անդրկովկասյան Ֆեդերացիայի ձևով այս միջնապատը մեր, վրացիներին ու Հանրապետությունների Միության միջև, թե իրը Ֆեդերացիան հարկավոր չէ։ Սա, կարծես թե, շատ հեղափոխականորեն և հնչում։ Բայց այստեղ ուրիշ դիտավորություն կա։ Նախ, այդ հայտարարությունները խոսում են այն մասին, վոր Վրաստանում ազգային հարցի բնագավառում զեպի ուսւաները յեղած վերաբերմունքը յերկրորդական նշանակություն ունի, վորովհետեւ այդ ընկերությունները (նրանց այսպես են անվանում) վոչինչ չունեն այն բանի դեմ, վոր Վրաստանը Միության հետ միավորվի ուղղակի, այսինքն՝ չեն վախենում վելիկոուսական շովինիզմից՝ զոնելով, վոր նա այսպես թե այնպես տակից կտրված ե, կամ թե՝ վճռողական նշանակություն չունի։ Նրանք, ակներեւ ե, ավելի վախենում են Անդրկովկասի Ֆեդերացիայի։ Ինչո՞ւ ինչու պետք ե յերեք ժողովուրդները, վոր ապրում են Անդրկովկասում, վոր այսքան ժամանակ կովել են իրար դեմ, վոր կոտորել են միմյանց, վոր պատերազմել են միմյանց զեմ, — ինչո՞ւ պետք ե այդ ժողովուրդները այժմ, յերբ, կերծապես, խորհրդային իշխանությունը նրանդ միջև յեղացրական միության կազեր և հաստատել Փեդերացիայի ձևով, յերբ այդ Փեդերացիան տվել ե փոխադարձ յեղացրության իսկական արդարիքներ, ինչո՞ւ այժմ պետք ե կորել Փեդերացիայի այդ կազերը։ Ինչո՞ւմն ե բանը, ընկերներ։ Բանն այն ե, ընկերներ, վոր Անդրկովկասի Փեդերացիայի կազերը զրկում են Վրաստանին արտօնյալ դրության այն բաժնից, վորը նա կարող եր գուազել իր աշխարհազրական դիրքով։ Դատեցեք ինքներդ։ Վրաստանն ունի իր նավահանգիստը—Բաթումը, վորի վրայով են գալիս առլրանքներն Արևմուտքից, Վրաստանը ունի մի այնպիսի յերկաթուղային հանգույց, ինչպիսին Թիֆլիսն ե, վորին չեն կարող մի կողմ թողնել Աղբակաջանը, վորն իր ապրանքները Բաթումից ե ստանում։ Յեթե Վրաստանը առանձին հանրապետություն լիներ, յեթե նա չմտներ Անդրկովկասյան Փեդերացիայի մեջ, նա կարող եր մի վոքրիկ ուլումատում ներկայացնել թե Հայաստանին, վորը չի կարող առանց Թիֆլիսի կառավարվել, և թե Աղբակաջանին, վորն առանց Բաթումի չի կարող յուր գնալ։ Այստեղ վորոշ ոգուտներ կլինելին։ Սա պատահականություն չե, ընկերներ, վոր մի այսպիսի վայրենի դեկրետ կորդոնի մասին հենց Վրաստանումն ե մշակվում։

* Տե՛ս գրքի վերջի 1 և 2 ծանոթադրությունները։

Այժմ այդ մեղքը Սերերը յակովի վրա յեն դցում : Դիցուք թե այդպես եր : Բայց չե՞ վոր նա Վրաստանում ե ծնվել և վոչ թե Արքքաջանում ու վոչ ել Հայաստանում : Սա պատահականություն չե , վոր յեղել ե մի այտպիսի դեկրետ , վորով ուզեցել են կարգավորել բնակչության ազգային խմբերի միջև յեղած հարաբերությունները նրա համար , վորպեսի մի բան պահեն հոգուտ Վրաստանի և Վրաստանին հնարավորություն տան ուղագործելու այն նպաստավոր աշխարհագրական դերքը , վորը նա անպայման ունի և վորը հանձինս ուկրոնիստների նա չի ուզում կորցնել : Այնուհետև , այստեղ մի ուրիշ պատճառ ել կա : Թիֆլիսը Վրաստանի մայրաքաղաքն ե , բայց այստեղ վրացիները 25%-ից ավելին չեն , հայերը 35%-ից պակաս չեն , այնուհետև գայիս են բոլոր մնացած ազգությունները : Այս ել ձեզ Վրաստանի մայրաքաղաքը : Թե վոր Վրաստանն առանձին հանրապետություն լիներ , ապա այստեղ կարելի յեր կատարել բնակչության վորոշ տեղափոխություն , որինակ , Հայ բնակչության տեղափոխություն Թիֆլիսից : Յեղել ե հո մի այդպիսի դեկրետ , վորի մասին ընկ . Մախարաձեն հայտնեց , թե այն ուղղված է յեղել հայերի դեմ : Կարելի յեր վորոշ տեղափոխություն կատարել այնպես , վոր հայեր տարեցարի Թիֆլիսում ավելի քիչ լինելին , քան վրացիներ , և այսպիսով , Թիֆլիսը դարձնել իսկական վրացական մայրաքաղաք : Յես յենթագրում եմ , վոր տեղահանության դեկրետը նրանք վերացրել են : Բայց նրանց ձեռքում բաղմաթիվ հնարավորություններ , բաղմաթիվ այնպիսի ձկուն ձեեր կան , —որինակ , «բեռնաթափումը» , —վորոնց միջոցով կարելի կլիներ , պահպանելով ինտերնացիոնալիզմի տեսքը , բանն այնպես սարքել , վոր Թիֆլիսում հայեր պակաս լինեն : Աշխարհագրական դերքի ահա այս ողուտները , վոր չեն ուզում կորցնել ուկրոնիստները , և վրացիների աննպաստ դերքը բուն Թիֆլիսում , վորուեղ վրացիներ ավելի քիչ կան , քան հայեր , —չենց սրանք են ստիպում մեր ուկրոնիստներին պայքարել Փեղերացիայի դեմ : Մենքեիները հայերին ու թաթարներին ուղղակի Թիֆլիսից տեղահանում ենին : Իսկ այժմ , խորհրդային իշխանության որով , տեղահանել չի կարելի , ուստի և պետք ե անջանավել Փեղերացիայից , և այն ժամանակ իրավական հնարավորություններ կլինեն , վորպեսզի ինքնուրույնորեն այնպիսի ոսկերացիաներ կատարեն , վարոնք կհանդեցնեն այն բանին , վոր վրացիների նպաստավոր դերքը լիովին կողտագործի Արքքաջանի ու Հայաստանի գեմ : Յեզ այս ամենի հետեւանքով կստեղծվեր վրացիների արտօնյալ

դըություն Անդրկովկասի ներսում : Այս ե ամբողջ վտանգը : Արդյոք մենք կարո՞ղ ենք , անտեսելով ազգային խաղաղության շահերն Անդրկովկասում , արդյոք մենք կարո՞ղ ենք ստեղծել այնպիսի պայմաններ , վոր վրացիները գտնվելին արտօնյալ դրության մեջ Հայաստանի և Արքքաջանի հանրապետությունների հանդեպ : Վո՞չ : Մենք այդ բանը թույլ տալ չենք կարող :

Կառավարման մի հին հատուկ սիստեմ կա , յերբ բուրժուական իշխանությունը մոտեցնում ե իրեն միքանի ազգություն , նրանց արտօնություններ ե տալիս , իսկ մնացած ազգություններին նվաստացնում ե՝ չկամենալով զբաղվել նրանցով : Այսպիսով , իրեն մոտեցնելով մի ազգություն՝ նա սրա միջոցով ձնչում ե զործ գնում մնացածների վրա : Այսպես ելին կառավարում , որինակ , Ավստրիայում : Բոլորի հիշողության մեջ ե ավստրիական մինիստր Բեյատի հայտարարությունը , յերբ նա կանչեց հունգարական մինիստրին ու ասաց , «դու կառավարիր քո հորդաները , իսկ յետ իմ հորդաներից զլուխս կթափեմ . դա ասել կուպի՝ հուղ տուր ու զգմիր զունդարիայում քո ազգություններին , իսկ յես կճղմեմ իմ ազգություններին : Դու և յես՝ արտօնյալ ազգեր ենք , իսկ մնացածներին ճղմիր : Նույն այս բանը տեղի յեր ունենում է Եւերի վերաբերմաք բուն Ավստրիայի ներսում : Ավստրիացիները լիւերին իրենց մոտեցրին , նրանց արտօնություններ ելին տալիս , վորպեսզի լիւերը ավստրիացիներին ողնեն՝ սրանց զիրքերը լեհաստանում ամրացնելու համար , իսկ սրա փոխարեն լիւերին հնարավորություն ելին տալիս Գալիցիան խեղդելու : Սա մի առանձին զուտ ավստրիական սիստեմ ե—զատել ազգություններից վոմանց ու նրանց արտօնություններ տալ , վորպեսզի այնուհետև մնացածների համար դան : Բյուրոկրատիայի տեսակետից՝ սա կառավարման խնայողական ձև է , վորովհետեւ հարկ ե լինում զբաղվել մի ազգությամբ , բայց քաղաքական տեսակետից , դա անխուսափելի մահ է , վորովհետեւ խախտել ազգությունների հավասարության սկզբունքները և վորեն արտօնություն թույլ տալ մի ազգության համար՝ դա նշանակում ե մահվան դատապարտելի իր ազգային քաղաքականությունը :

Հենց նույն կերպ ել այժմ Անդրկան ե կառավարում Հնդկաստանը : Վորպեսզի բյուրոկրատիայի տեսակետից ավելի հեշտությամբ զլուխս թափեն Հնդկաստանի ազգություններից ու ցեղերից , Անդրկան Հնդկաստանը բաժանել ե Բրիտանական Հնդկաստանի (240,000,000 բնակչություն) ու բնիկների Հնդկաստանի (72,000,000) : Ի՞նչ հիման վրա : Հենց այն հիման վրա , վոր Ան-

Դիման ցանկացել ե ազգերի մի խումբը զատել ու նրան արտոնություններ տալ, վորպեսպի դրանով իսկ ավելի հարմար կերպով կառավարի մյուս ազգությունները։ Բուն Հնդկաստանում ազգությունները 800-ից պակաս չեն, և Անդիման վճռել ե՝ փոխանակ յես զբաղվեմ 800 առանձին ազգություններով, ավելի լավ ե զատել միքանի ազգ, տալ նրանց վորոշ արտոնություններ և նրանց միջոցով կառավարել մյուններին, վորովհետեւ, նախ, մնացած ազգերի գեղոհությունն այդ գեղքում ուղղվելու յե այս արտոնյալների, և վոչ թե Անդիմայի դեմ, իսկ յերկրորդը, յերկույթերեք ազգով «զբաղվելը» ավելի եժան կնսուի, քան 800-ով «զբաղվելը»։

Սա նույնական կառավարման սիստեմիկ է, անդիմական սիստեմիկ։ Դա ի՞նչ բանի յե հանդեցնում։ Ազգարատի եժանացման, — այս ճիշտ է։ Բայց, ընկերնե՛ր, յեթե վերանանք բյուրոկրատական հարմարություններից, ապա այս՝ անդիմական տիրապետության մահն ե Հնդկաստանում, այստեղ, այս սիստեմումն է անդիմական կառավարման ու անդիմական տիրակալության ամրող սիստեմի անխուսափելի, ինչպես յերկու անգամ յերկու չորս՝ մահը։

Մեզ գեպի այս վասնավոր ճանապարհն են մզում մեր ընկեր վրացի-ուկիլոնիստները, վորքան վոր նրանք պայքարում են Փեղերացիայի դեմ, խախտելով կուսակցության բոլոր որենքները, վորքան վոր նրանք ուղում են զատվել Փեղերացիայից, վորպեսզի պահեն իրենց նպաստավոր գերքը։ Նրանք մեզ մզում են գեպի մի ուղի՝ վորոշ արտոնություններ ընձեռելու իրենց՝ ի հաշիվ Հայաստանի ու Աղբբեջանի հանրապետությունների։ Մենք այս ճանապարհը չենք կարող ընտրել, վորովհետեւ սա հաստատապես մահ է մեր ամբողջ քաղաքականության ու խորհրդային իշխանության համար կովկասում։

Պատահականություն չե, վոր այս վասնգը զգացին մեր ընկերները Վրաստանում։ Հարձակման անցած վրացական այս շովինիզմը, վոր ուղղված եր հայերի ու ադրբեջանցների դեմ, վրդովեց Վրաստանի կոմկուսին։ Պատահականություն չե, վոր Վրաստանի կոմկուսը, վորը եր լեզաւ գոյության որից սկսած յերկու համագումար ե ունեցել, ամեն անգամ միահամուռ մերժել ե ընկերուկլոնիստների դիրքը, վորովհետեւ առանց Անդրկովկասյան Փեղերացիայի չի կարելի խաղաղություն պահել կովկասում, չի կարելի հավասարություն հաստատել։ Չի կարելի թույլ տալ, վոր մի ազգություն ավելի արտոնյալ լինի, քան մյուսը։ Այս բա-

նը մեր ընկերներն զգացին։ Ահա թե ինչու պայքարի յերկու տարում Մդիվանու խումբը ներկայացնում ե մի փոքրիկ խմբակ, վորին մի զուրս զուրս ե շղրտում կուսակցությունը հենց կրաստանում։

Պատահականություն չե նաև այն, վոր ընկ այնպես շտապում եր և այնպես խթանում եր, վորպեսզի ֆեղերացիան անհապաղ մտցվի։ Պատահական չե նաև այն, վոր մեր կենտկոմը յերից համատաել ե Փեղերացիայի անհրաժեշտությունն Անդրկովկասում, — Փեղերացիա, վորն ունի իր ԿԳԿ և իր գործադիր իշխանությունը, վորի վճիռները պարտադիր են հանրապետությունների համար։ Պատահական չե և այն, վոր յերկու հանձնաժողովն ել-թե ընկ ։ Զերինսկունը և թե ընկ ։ Կամենելինը՝ կույրիչեվի հետ միասին, — գալով Մոսկվա՝ ասացին, վոր չի կարելի յուլա դնալ առանց Փեղերացիայի։

Պատահական չե, վերջապես, նաև այն, վոր «Սոցիալիստի-չեսկի Վեստնիկի» մենշևիկները գովում են մեր ընկեր-ուկունիստներին Փեղերացիայի գեմ պայքարելու համար, ձեռքերի վրա յեն ման ածում նրանց։ ձկնորսը ձկնորսին հեռվից ե տեսնում։

Անցնում եմ, ընկերնե՛ր, այն միջոցների, այն յեղանակների քննարկմանը, վորոնց ոգնությամբ անհրաժեշտ ե, վոր մենք հաղթահարենք միավորումը արգելակող այս յերեք հիմնական գործոնները՝ վելիկուուսական չովինիզմը, փաստական անհավասարությունը և տեղական նացիոնալիզմը մանավանդ այն գեպում, յերբ այն չովինիզմի յե վորսարկվում։ Այն միջոցներից, վորոնք կարող են ոզնել մեզ՝ անհիվանդագին կերպով վերացնելու այս ամրող ժառանգությունը, հին ժառանգությունը, վորն արգելակում ե ժողովուրդների մերձեցումը, յես կնշեմ միայն յերեքը։

Առաջին միջոցը. ձեռք առնել բոլոր միջոցներն այն բանի համար, վորպեսզի խորհրդային իշխանությունը հանրապետություններում հասկանալի ու հարազատ դառնա, վորպեսզի խորհրդային իշխանությունը մեզանում լինի վոր միայն ոռուսական, այլև միջազգային։ Սրա համար անհրաժեշտ ե, վոր վոչ միայն դպրոցները, այլև բոլոր հիմնարկները, բոլոր մարմինները, ինչպես կուսակցական, այնպես ել խորհրդային՝ քայլ առ քայլ ազգայնանան, վոր նրանք գործեն մասսաների համար հասկանալի լեզվով, վոր նրանք գործեն ժողովրդի կենցաղին համապատասխանող պայմաններում։ Միայն այս պայմանով ե, վոր մենք հնարավորություն կոտանանք խորհրդային իշխանությունը դարձ-

նելու ռուսականից՝ միջազգյան, մոտ, հասկանալի ու հարազատ բոլոր հանրապետությունների և առանձնապես այն հանրապետությունների աշխատավոր մասսաների համար, վորոնք հետ են մնացել տնտեսապես ու կուլտուրապես:

Յերկրորդ միջոցը, վորը կարող է հեշտացնել ցարիքից ու բուրժուազիայից ստացված ժառանգությունը անհիմանդադին կերպով վերացնելու մեր դործը, դա կոմիսարիատների մի այնպիսի կառուցվածքն է Հանրապետությունների Միության մեջ, վորը դոնե հիմնական ազգություններին հանրավորություն տար կոլեգիանների կազմում ունենալու իրենց մարդիկը և վորը ստեղծեր մի այնպիսի իրադրություն, յերբ առանձին հանրապետությունների կարիքներն ու պահանջները անպայման բավարպեցին:

Յերրորդ միջոցը. անհրաժեշտ է, վոր մեր բարձրագույն մարմինների կազմում լինի մի այնպիսի մարմին, վորը հանդիսանար առանց բացառության բոլոր հանրապետությունների և աղդությունների կարիքների ու պահանջների արտացոլումը։ Յեռուգում եմ այս վերջինիս վրա հատկապես հրավիրել ձեր ուշադրությունը։

Յեթե վոր մենք կարողանայինք միութենական կդկ կազմում հիմնել յերկու պալատ, վորոնցից առաջինն ընտրվեր խորհուրդների միութենական համագումարում՝ անկախ ազգություններից, իսկ յերկրորդ պալատն ընտրվեր հանրապետությունների ու մարդերի կողմից (հանրապետությունները հավասարաբար և աղդային մարդերը նույնպես հավասարաբար) և հաստատվեր Հանրապետությունների Միության խորհուրդների նույն համագումարի կողմից, յես կարծում եմ, վոր այն ժամանակ մեր գերազույն հիմնարկների կազմում մենք կունենայինք նաև զուտ աղդային պահանջների արտացոլումը և վոչ թե միայն առանց բացառության բոլոր պրոլետարական խմբերի դասակարգային շահերի արտացոլումը։ Մենք կունենայինք մի մարմին, վորը կարտացուեր Հանրապետությունների Միության տերիտորիայի վրա բնակվող ազգությունների, ժողովուրդների ու ցեղերի հատուկ շահերը։ Զի կարելի, ընկերներ, մեր պայմաններում, յերբ Միությունն ընդհանուր առմամբ միավորում ե 140 միլիոն մարդ, վորոնցից մի 65 միլիոնը վոչ-ուստաներ են, —այս տեսակի մի պետության մեջ չի կարելի կառավարել՝ այստեղ, Մոսկվայում, բարձրագույն մարմնում, մեր առջև չունենալով այդ ազգությունների պատվիրակներին, վորոնք արտացոլելին վոչ միայն ամբողջ

պրոլետարիատի համար ընդհանուր շահերը, այլև առանձին, հատուկ, սպեցիֆիկ, ազգային շահերը։ Առանց սրան, ընկերներ, չի կարելի կառավարել։ Չունենալով ձեռքեր ու աչքեր ունի՝ նահանգապետների ձեռվկ։ Սա կառավարման շատ պարզ ձեւ է, ըստվորում՝ գլուխը, կառավարելով յերկրը՝ այն տեղեկություններն ե ստանում, վոր կարող են ստացվել նահանգապետներից, և զլուխն իրեն մխիթարում ե այն հույսով, նոր նա ագնվաբար և ճիշտ է կառավարում։ Հետո բաղխումներ են ծագում, բաղխումները փոխարկվում են կոնֆլիկտների, կոնֆլիկտները՝ ասկըստամբությունների։ Հետո ապստամբությունները ճնշվում են։ Կառավարման այսպիսի սիստեմը մեր սիստեմը չե, ի դեպ, այն չափազանց թանգ է, թեպետև, պարզ է։ Խորհրդային յերկրում մենք պետք ե յուրացնենք կառավարման այն սիստեմը, վորը հանրավարման ամենահաջող պատճեն է տալիս ճշտությամբ կռահելու բոլոր փոփոխությունները, բոլոր հանդամանքները՝ թե՛ գյուղացիների մեջ, թե՛ նացիոնալների մեջ, թե՛ այսպես կոչված այլազդիների մեջ, թե՛ ուռուների մեջ, վորպեսզի բարձրագույն որդանների սիստեմում լինեն մի շարք բարումետրներ, վորոնք կռահեն ամեն մի փոփոխություն, հաշվի առնեն ու կանխեն թե բասմաչական շարժումը, թե բանդիտականը, թե կրոնշտագումը, թե ամեն մի հնարավոր փոթորիկ ու ձախորդություններ։ Սա կառավարման խորհրդային սիստեմն է։ Նա այն պատճառով է կոչվում խորհրդային իշխանություն, ժողովրդական իշխանություն, վոր հենվելով բուն ներքնախավների վրա՝ նա բոլորից չուտ և զգում ամեն մի փոփոխություն, համապատասխան միջոցներ ե ձեռք առնում և ժամանակին ե շտկում զիծը, յեթե այն ծովել ե, —ինքն է իրեն քննադատում ու շտկում ե զիծը։ Կառավարման այս սիստեմը խորհրդային սիստեմն է, և այն պահանջում է, վորպեսզի բարձրագույն մարմինների սիստեմում մենք ունենանք մարմիններ, վորոնք առանց մնացորդի արտացոլեն ազգային կարիքներն ու պահանջները։

Առարկություն կա, թե այդ կրարդացնի կառավարման ամբողջ սիստեմը, թե դա նոր մարմիններ կկուտակի իրար զլիսի:

Այդ ճիշտ ե: Մինչև այժմ մենք ունեյինք ՌՍԳԽՀ ԿԳԿ, ապա ստեղծեցինք Միության ԿԳԿ, այժմ, յերեխ, հարկ կլինի Միության ԿԳԿ բաժանել յերկու մասի: Ինչ արած: Յես մատնանշեցի, վոր կառավարման ամենապարզ ձևն ե՝ մեկին գործի գլուխ նստեցնել և նրան նահանգապետներ տալ, բայց չոկտեմբերից հետո արդեն չի կարելի զբաղվել այդպիսի եքսպերիմենտներով: Սիստեմը բարդացել ե, բայց այն հեշտացնում ե կառավարումը և ամբողջ կառավարումը խորապես խորհրդային ե զարձում: Ահա թե ինչու յես կարծում եմ, վոր համապումարը պետք ե ընդունի հատուկ մարմնի, Միության ԿԳԿ-ի կազմում յերկրորդ պալատի, վորպես բացարձակապես անհրաժեշտ մի մարմնի, հիմնադրումը:

Յես չեմ ասի, թե սա Միության ժողովուրդների միջև համագործակցությունը կարգավորելու կատարյալ ձև ե, չեմ ասի, թե սա դիտության վերջին խոսքն ե, բնալ ել վոչ: Աղջային հարցը մենք տակավին հաճախ ենք դնելու, վորովհետեւ ազգային ու միջազդային պայմանները փոփոխվում են և ելի կարող են փոխվել: Յես չեմ հարաժարվում այն բանից, վոր գուցե մենք հարկադրված լինենք միքանի կոմիսարիատներ, վոր մենք միաձուլում ենք Հանրապետությունների Միության կազմի մեջ, հետո անջատել, յեթե փորձը ցույց տա, վոր կոմիսարիատներից վոմանք, միաձուլվելով, մինուս են տվել:

Բայց մի բան պարզ ե, —վոր տվյալ պայմաններում ու տվյալ իրադրության մեջ մեր տրամադրության տակ ավելի լավ մեթոդ և ուրիշ, ավելի հարմար մարմին չկա: Հանրապետության առանձին մասերի ներսում յեղող տատանումներն ու բոլոր փոփոխություններն արտացոլել կարողացող մարմին ստեղծելու համար ավելի լավ միջոցներ և այլ ճանապարհ, քան յերկրորդ պալատի հիմնումն ե՝ մենք առայժմ չունենք: Քսանինքյան հասկանալի յե, վոր յերկրորդ պալատում պետք ե ներկայացվեն վոչ միայն այս չորս հանրապետությունը, վորոնք միավորվել են, այլ բոլոր ժողովուրդները, վորովհետեւ խոսքը վոչ միայն այն հանրապետությունների մասին ե, վորոնք ձեւականորեն միավորվել են (նրանք չորսն են), այլև բոլոր ժողովուրդների ու ազգությունների մասին ե: Ուստի մեզ անհրաժեշտ ե ունենալ մի այնպիսի ձև, վորը կարող առանց տալ առանց բացառության բոլոր ժողովուրդների ու հանրապետությունների պահանջների արտացոլումը:

Յես ամփոփում եմ, ընկերներ: Ուրեմն աղջային հարցի կա-

րեուրությունը վորովհում ե նոր սիտուացիայով՝ միջադրային դրության մեջ, նրանով, վոր մենք այստեղ, Ռուսաստանում, մեր Փեղերացիայում, պետք ե աղջային հարցը լուծենիք ճիշտ, որին հակելի ձեռվ, վորպեսզի որինակ տանք մեր հեղափոխության ժանր ուղղերված հանդիսացնող Արքելքին և դրանով իսկ ուժեղ զայտական գույնը այդ ուղղերված իստությունը, հակումը դեպի մեր Փեղերացիան: Ներքին դրության տեսակետից՝ նեպի պայմանները, ուժեղացնող վելիկոսուսական շովինիդը նույնպես մեզ պարտադրում են ընդդեկու աղջային հարցի առանձին կարեռությունը:

Այնուհետև յես ասացի, վոր աղջային հարցի եյությունը՝ դա ճիշտ հարաբերությունների սահմանումն ե՝ նախկին պետական աղջիկի պրոլետարիատի և նախկին վոչպետական աղջերի դյուլացիության միջև, վոր այս տեսակետից՝ տվյալ մոմենտում աղջային հարցի կոնկրետ ձեռն արտահայտվում է նրանով, վոր ուղիներ գտնենք, միջոցներ գտնենք ժողովուրդների համագործակցությունը և համակեցությունը Հանրապետությունների Միության մեջ, միասնական պետության մեջ, հարդարելու համար:

Այնուհետև յես խոսեցի այն գործոնների մասին, վորոնք նպաստում են ժողովուրդների այդպիսի մերձեցմանը: յես խոսեցի այն գործոնների մասին, վորոնք արգելակում են այդպիսի միավորումը: Յես հատկապես կանգ առա վելիկոսուսական շովինիդի, վորպես ամրապնդվող ուժի վրա: Այդ ուժն այն հիմնական վտանգն ե, վորը կարող է խախտել առաջներում ճնշված ժողովուրդների վատահությունը զեպի ուսւա պրոլետարիատը: Դա՛ մեր ամենավտանգավոր թշնամին ե, վորին մենք պետք ե տապալենք, վորովհետեւ, յեթե մենք նրան տապալենք, ապա ⁹/₁₀-ով տապարած կլինենք նաև այն նացիոնալիզմը, վորը պահպանվել ե և վորը զարգանում ե առանձին հանրապետություններում:

Ապա: Մենք կանգնած ենք այն վտանգի առջև, վոր ընկերների միքանի իմբեր մեզ կարող են մզել աղջություններից վոռմանց ի վնաս մյուսների արտոնություններ ընձեռելու ճանապարհը: Յես հայտարարեցի, վոր մենք այդ ճանապարհը քանել չենք կարող, վորովհետեւ դա տեղական նացիոնալիզմի զարգացումն ե ամենայլանդակ, ամենաշովինիստական ձեռվ, վորովհետեւ այն կարող է խախտել աղջային խաղաղությունը և սպանել այլազգի մասսաների վատահությունը զեպի խորհրդային իշխանությունը:

Այնուհետև, յես ասացի, թե այն հիմնական միջոցը, վորը

մեզ կարող ե հնարավորություն տալ ամենաանհիմանդադին կերպով վերացնելու միավորմանը խանդարող այդ գործոնները, զայերկրորդ պալատն ե ԿԳԿ կազմում, —մի պալատ, վորի մասին ավելի բացահայտորեն յես խոսել եմ կենտկոմի փետրվարյան պլենումում և վորի մասին թեղիսներում ավելի սքողված ձեռով ե խոսվում, վորպեսզի հնարավորություն տրվի ընկերներին մի դուցե նշելու, դանելու մի ուրիշ, ավելի ճկուն ձև, մի ուրիշ, ավելի հարմար մարմին, վորը կարողանա արտացոլել աղդությունների շահերը: Մրանք են յեղրակացությունները:

Յես կարծում եմ, վոր միայն այս ճանապարհը բռնելով մենք կհասնենք ազգային հարցի ճիշտ լուծմանը, մենք կհասնենք այն բանին, վոր լայնորեն կպարզենք պրոլետարական հեղափոխության գրությ և նրա չուրջը կհավաքենք Արևելքի յերկիրների համակրանքն ու վատահությունը, —Արևելքի, վորը ներկայացնում ե մեր հեղափոխության ծանր ուղղերգները և կարող ե վճռողական դեր խաղալ իմպերիալիզմի դեմ պրոլետարիատի մզելիք ազգայա մարտերում: (Ծափակարություններ):

ՅԵԶՐԱՓԱԿՄԱՆ ԽՈՍՔ

Ընկերներ: Նախքան ազգային հարցի սեկցիայի աշխատանքների մասին հաղորդում անելուն անցնելը՝ ինձ թույլ տվելք սուրկություն անելու այն հոետորներին, վորոնք արտահայտվելին իմ զեկուցման շուրջը, յերկու հիմնական կետի վերաբերմաբ: Սա ընդամենը մոտ 20 բուրե կիսլի, վոչ ավելի:

Առաջին հարցը՝ զա այն հարցն ե, վոր մի խումբ ընկերներ, բուլարինի ու Ռակովսկու գլխավորությամբ, չափազանց ուռեցրին ազգային հարցի նշանակությունը, չափազանցըին այն և ազգային հարցի պատճառով աչքաթող արին սոցիալական հարցը, — բանվոր դասակարգի իշխանության հարցը:

Մինչեւ մեզ համար, վորպես կոմունիստների համար, պարզ ե, վոր մեր ամբողջ աշխատանքի հիմքը բանվորների իշխանությունն ամրապնդելու աշխատանքն ե, և միայն սրանից հետո յե, վոր մեր առջև ծառանում ե մյուս հարցը, շատ կարեոր, բայց առաջինին ստորագիր մի հարց—ազգային հարցը: Մեզ ասում են, թե չի կարելի նեղացնել նացիոնալներին: Այդ միանդամայն ճիշտ ե, յես համաձայն եմ դրա հետ, — հարկավոր չե նեղացնել նրանց: Բայց սրանից ստեղծել մի նոր թեորիա այն մասին, թե վելիկոուսական պրոլետարիատը պետք ե դնել անիրավահավասար վե-

ճակի մեջ նախկին ճնշված աղդերի հանդեպ՝ սա նշանակում է անպատեհ բան ասել: Այն, ինչ ընկ. Լենինի մոտ խոսքի դարձվածքը նրա հոդվածում, ընկ. Բուլարինը մի ամբողջ լողունդի վերածեց: Մինչեւ, պարզ ե, վոր պրոլետարական դիկտատուրայի քաղաքական հիմքն ամենից առաջ և գլխավորապես կենտրոնական շրջաններն են, արդյունաբերական շրջանները, և վոչ թե ծայրամասերը, վորոնք գյուղացիական յերկիրներ են: Յեթե վոր մենք չափազանցության մեջ ընկերները՝ գերակշռություն տանք գյուղացիական ծայրամասերին ի վնաս պրոլետարական շրջանների, ապա պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում կարող ե ճեղք առաջ զալ: Սա, ընկերներ, վտանգավոր ե: Քաղաքականության մեջ չի կարելի գերազել ճիշտ այնպես, ինչպես վոր չի կարելի և թերապել:

Հարկավոր ե հիշել, վոր բացի աղդերի ինքնորոշման իրավունքից՝ կա նաև բանվոր գասակարգի իր իշխանությունը ամրապնդելու իրավունքը, և այս վերջին իրավունքին յենթակա յե ինքնորոշման իրավունքը: Դեպքեր են լինում, յերբ ինքնորոշման իրավունքը հակասության մեջ և մտնում մի ուրիշ, ավելի բարձր իրավունքի հետ, — իշխանություն նվաճած բանվոր գասակարգի կողմից իր իշխանությունն ամրապնդելու իրավունքի հետ: Այսպիսի գեղեցիկ պեղերում, — այս ուղղակի պետք ե ասել, — ինքնորոշման իրավունքը չի կարող և չպետք ե խոչնորոշությունը հակարգագույն գործին: Առաջինը պետք ե տեղի տա յերկրորդի առաջ: Այսպես եր, որինակ, 1920 թվականին, յերբ մենք հարկադրված ենքնը, նկատի ունենալով բանվոր դասակարգի իշխանությունը պաշտպանելու շահը, գնալ Վարչավայի վրա:

Առաջին չպետք ե մոռանալ, վոր նացիոնալներին ամեն աեսակի խոստումներ բաժանելով, պատվի բոնելով ազգությունների ներկայացուցիչների առջև, ինչպես այդ անում եյին ընկերներից վոմանք այս համագումարում, հարկավոր ե հիշել, վոր աղդային հարցի ներգործության վայրուրը և, այսպես ասած, նրա իրավասության սահմանները մեր արտաքին ու ներքին պայմաններում առաջինական կլում են «բանվորական հարցի»՝ վորպես բոլոր հարցերից հիմնականի՝ ներգործության ու իրավասության վոլորտով:

Այստեղ շատ շատերը վկայակոչում եյին Վլադիմիր Իլյիչ գրություններն ու հոգվածները: Յես չեյի կամենա մեջքերում անել իմ ուսուցչից՝ ընկ. Լենինից, վորովհետեւ նա այստեղ չե,

և յես յերկյուղ եմ կրում, վոր, գուցե, նրան սխալ ու վոչ տեղին վկայակոչեմ: Բայց և այնպես, յես հարկադրված եմ մեջ բերել աքսիոմատիկ մի տեղը, վորը վոչ մի թյուրիմացության տեղիք չի տալիս, վորպեսզի ընկերները կասկածներ չունենան ազգային հարցի տեսակարար կը ուի վերաբերմամբ: Ինքնորոշման վերաբերյալ հոգվածում, քննարկելով Մարքսի նամակը աղջային հարցի մասին, ընկ. Լենինն այսպիսի հետեւություն ե անում.

«Բանվորական հարցի» համեմատությամբ ազգային հարցի ստորադիր նշանակություն ունենալը Մարքսի համար կասկածի յենթակա չե»¹:

Այստեղ ընդամենը յերկու տող ե, բայց նրանք վճռում են ամեն ինչ: Այս, սա պետք է ականջի ող դարձնեն վոչ ըստ բանականության ջերմեռանդ մեր միքանի ընկերները:

Յերկրորդ հարցը—այդ վելիկոուսական չովինիզմի ու տեղական չովինիզմի հարցն ե: Այստեղ հանդես յեկան ընկ. Ռակովսկին և մանավանդ ընկ. Բուխարինը, վորը առաջարկեց գենցել տեղական չովինիզմի վնասակարության մասին խոսող կետը: Թե իբր ինչ կարիք կա զբաղվելու մի այնպիսի փոքրիկ վորդով, ինչպիսին տեղական չովինիզմն ե, յերբ մենք մի այնպիսի «Գողթաթ» ունենք, ինչպիսին վելիկոուսական չովինիզմն ե: Ընդհանրապես, ընկ. Բուխարինի արամագրությունը զղական եր: Սա հասկանալի յե. տարիներով նա մեղանչել ե ազգությունների գեմ՝ ժխտելով ինքնորոշման իրավունքը, —ժամանակ ե, վերջապես, վոր զղա: Բայց զղալով, նա մի ուրիշ ծայրահեղության մեջ ընկալ: Կուրյոզային ե, վոր ընկ. Բուխարինը կոչ ե անում կուսակցությանը հետեւությունը իր որինակին և նույնպես զղալու, թեև ամբողջ աշխարհը գիտե, վոր կուսակցությունն այստեղ մեղք չունի, վորովհետեւ նա իր գոյության հենց սկզբից (1898թ.) ճանաչել ե ինքնորոշման իրավունքը և, հետեւարար, զղալու բան չունի: Բանն այն ե, վոր ընկ. Բուխարինը չի հասկացել աղջային հարցի եյությունը: Յերբ առում են, թե ազգային հարցի անկյունաքար պետք ե դարձնել վելիկոուսական չովինիզմի գեմ պայքարելը, դրանով ուղում են նշել ոռու կոմունիստի պարտականությունը, դրանով ուղում են ասել, վոր ուղարկությունը կոմունիզմի պարտականությունը, և անձամբ պայքար մղել ոռուսական չովինիզմի գեմ: Յեթե ոռուսական չովինիզմի գեմ պայքարելուն ձեռնարկելին վոչ

¹ Լենին, Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին, Յերկը, Հատ. XVII, Էջ 460: Խըր. :

թե ոռու կոմունիստները, այլ թուրքեստանական կամ վրացական կոմունիստները, ապա նրանց այդպիսի պայքարը կզնահատելին վորպես հակառական չովինիզմ: Դա կխճճեր ամբողջ գործը և կամրապնդեր վելիկոուսական չովինիզմը: Միայն ոռու կոմունիստները կարող են իրենց վրա վերցնել վելիկոուսական չովինիզմի գեմ պայքարելու գործը և այն մինչեւ վերջը հասցնել:

Իսկ ի՞նչ են ուզում ասել, յերբ առաջարկում են պայքարել տեղական հակառական չովինիզմի գեմ: Դրանով ուզում են նշել տեղական կոմունիստների պարտականությունը, վոչ—ոռու կոմունիստների պարտականությունը՝ պայքարելու իրենց չովինիզմի գեմ: Մի՞թե կարելի յե ժխտել, վոր կան թեքումներ դեպի հակառական չովինիզմը: Զե՞ վոր ամբողջ համադումարը ակներկորեն տեսալ, վոր տեղական չովինիզմ—վրացական, բաշկիրական և այլ չովինիզմ կամ՝ վոր պետք ե նրա դեմ պայքարել:

Ոռու կոմունիստները չեն կարող պայքարել թաթարական, վրացական, բաշկիրական չովինիզմի գեմ, վորովհետեւ յեթե ոռու կոմունիստն իր վրա վերցնի թաթարական կամ վրացական չովինիզմի գեմ պայքարելու ծանր խնդիրը, առա նրա այդ պայքարը կզնահատվի վորպես վելիկոուսական չովինիզմի պայքար ընդդեմ թաթարների կամ վրացիների: Դա կխճճեր ամբողջ գործը: Միայն թաթար, վրացի և այլն կոմունիստները կարող են պայքարել թաթարական, վրացական և այլն չովինիզմի գեմ, միայն վրացի կոմունիստները հաջողությամբ կարող են պայքարել իրենց վրացական նացիոնալիզմի կամ չովինիզմի գեմ: Սա յե վոչ—ոռու կոմունիստների պարտականությունը: Ահա թե ինչու անհրաժեշտ ե նշել թեղիսներում՝ ոռու կոմունիստների (յես նկատի ունեմ վելիկոուսական չովինիզմի գեմ պայքարելը) և վոչ—ոռու կոմունիստների (յես նկատի ունեմ նրանց պայքարն ընդդեմ հայկացական, հակաթաթարական, հակառական չովինիզմի) այս յերկողմանի խնդիրը: Առանց սրան թեղիսները միակողմանի դուրս կգան, առանց սրան վոչ պետական, վոչ ել կուսակցական շինարարության մեջ վոչ մի ինտերնացիոնալիզմ չի կարելի ստեղծել:

Յեթե մենք պայքար մղենք միայն վելիկոուսական չովինիզմի գեմ, ապա այդ պայքարն ստվերի մեջ կթողնի թաթարական և այլ չովինիստների պայքարը, վորը զարգանում ե տեղերում և վորը վտանգավոր է մանավանդ այժմ, ներկի պայքաններում: Մենք չենք կարող պայքար չմղել յերկու ֆրոնտով, վորովհետեւ միայն յերկու ֆրոնտով պայքարելու պայքանով ե—մի կողմից,

մեր շինարարական աշխատանքում հիմնական վոտանդ հանդիսացող վելիկուուսական չովինիզմի դեմ պայքարելու և, մյուս կողմից, տեղական չովինիզմի դեմ պայքարելու պայմանով, — վոր կարելի կլինի հաջողության հասնել, վորովհետեւ առանց այդ յերկիողմանի պայքարի ոռւս և այլ ազդի բանվորների ու գյուղացիների վոչ մի զոդում չի ստացվի: Հակառակ դեպքում կարող է ստացվել տեղական չովինիզմի քաջալերում, տեղական չովինիզմի պարգևատրման քաղաքականություն, վորը մենք չենք կարող թույլ տալ:

Թույլ տվեք ինձ այստեղ վկայակոչելու ընկ. Լենինին: Այս բանը յես չելի անի, բայց վորովհետեւ մեր համագումարում շատ ընկերներ կան, վորոնք ծուռումուռ մեջբերումներ են անում ընկ. Լենինից, աղավաղելով նրան՝ թույլ տվեք միքանի խոսք կարդալ ընկ. Լենինի՝ բոլորին հայտնի մի հոգվածից.

«Պրոլետարիատը պետք է պահանջի այն գաղութների ու ազգերի քաղաքական անջատման աղատություն, վորոնց ձընչում ե «նրա» ազգը: Հակառակ դեպքում՝ սլրոլետարիատի ինտերնացիոնալիզմը կմնա դատարկ ու խոսքի ինտերնացիոնալիզմ. վո՛չ վասահություն, վո՛չ ել դասակարգային համերաշխություն հնարավոր չեն ճնշված ու ճնշող աղդերի բանվորների միջև»¹:

Սրանք, այսպես ասած, տիրապետող կամ նախկին տիրապետող ազգի պրոլետարների պարտականություններն են: Այնուհետեւ նա խոսում է արդեն առաջներում ճնշված ազգերի պրոլետարների կամ կոմունիստների պարտականության մասին.

«Մյուս կողմից, ճնշված աղդերի սոցիալիստաները պետք է մանավանդ պաշտպանեն ու կենսագործեն ճնշված ազգի բանվորների լիակատար և այնպայմանական, այդ թվում նաև կաղմակերպական, միասնությունը ճնշող ազգի բանվորների հետ: Պահնց սրան անհնարին է պաշտպանել պրոլետարիատի ինքնուրույն քաղաքականությունը և նրա դասակարգային համերաշխությունը այլ յերկիրների պրոլետարիատի հետ՝ բուրժուազիայի բոլոր ու ամեն տեսակի արարքների, դավաճանությունների ու խարզախությունների պայմաններում, վորովհետեւ ճնշված աղդերի բուրժուազիան ազգային աղատադրու-

թյան լողունգները շարունակ վերածում ե բանվորներին խարելու գործի»¹:

Ինչպես տեսնում եք, յեթե արդեն զնանք ընկեր Լենինի հետքերով, — իսկ այստեղ ընկերներից վորանք նրա անունով են յերդվում, — ապա անհրաժեշտ է յերկու թեղիսն ել՝ ինչպես վելիվում, զի պայմանությունը լինի աղավաղական չովինիզմի դեմ պայքարելու, այնպես ել տեղական կոռուսական չովինիզմի դեմ պայքարելու թեղիսը՝ թողնել բանաձեկ մեջ, վորապես մի յերկույթի յերկու կողմերը, ինչպես առհասարակ չովինիզմի դեմ պայքարելու թեղիսներ :

Յես սրանով վերջացնում եմ առարկություններս այն հոետորների դեմ, վորոնք այստեղ հանդես յեկան:

¹ Լենին, Սոցիալիստական հեղափոխությունը և աղդերի ինքնորոշման իրադրությը, Յերկեր, Հատ. XIX, Եջ 41:—Խմբ.:

¹ Լենին, Սոցիալիստական հեղափոխությունը և աղդերի ինքնորոշման իրադրությը, Յերկեր, Հ. Ա. Եջ 41:—Խմբ.:

ԱԶԳԱՅԻՆ ՄՈՄԵՆՏՆԵՐԸ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ
ՊԵՏԱԿԱՆ ՇԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

(1923 թ. ապրիլին ՌԿ(բ)Կ XII համագումարի
ընդունած քանակը)

I

1) Կապիտալիզմի զարդացումը տակավին անցյալ գարում հայտաբերեց արտադրության ու փոխանակության յեղանակների հնտերնացիոնալացման, ազգային ինքնամփոփության վոչնչացման, ժողովուրդների տնտեսական մերձեցման և հսկայական տերիտորիաները վորպես մի կապակցված ամբողջություն աստիճանաբար միավորելու տեսնենց։ Կապիտալիզմի հետագա զարգացումը, համաշխարհային շուկայի զարդացումը, ծովային ու յերկաթուղային մեծ ճանապարհների գործի կարգավորումը, կապիտալի արտածումը և այլն, ել ավելի ուժեղացրին այդ տեսնենցը՝ ամենաբարդագմաղան ժողովուրդները կապելով աշխատանքի միջադադարնման բազմակողմանի փոխադարձ կախման կապեղային բաժանման և բազմակողմանի փոխադարձ կախման ուժով։ Վորքան վոր այդ պրոցեսն արտացոլում եր արտադրողական ուժերի վիթխարի զարդացումը, վորքան վոր այն հետացնում եր առանձնացման (օбоօծություն) և զանազան ժողովային առանձնացման վահերի հակադրության վոչնչացումը, այն յեղել ե մնում և առաջադիմական պրոցես, վորովհետև նյութական նախադրյաներ և նախապատրաստում ապազա համաշխարհային սոցիալիստական տնտեսության համար։

2) Բայց այս տենդենցը զարգացել է յուրահատուկ ձևերով, վորոնք բոլորովին չեն համապատասխանում նրա ներքին պատմական խմաստին: Ժողովուրդների փոխադարձ կախումը և տերիտորիաների տնտեսական միավորումը կապիտալիզմի զարգացման ընթացքում սահմանվում է յին վոչ ժե ժողովուրդների՝ վորպես իրավահակասար միավորների համագործակցության ձևնապարհով, այլ մի ժողովուրդ մյուսների կողմէից հպատակեցնելու կար-

գով, ամելի պակաս զարդացած ժողովուրդներին ամելի շատ զարդացած ժողովուրդների կողմից ճնշելու և շահագործելու կարգով։ Գաղութային թալաններ ու հափշտակումներ, ազգային ճնշում ու անհավասարություն, իմացերի լիստական կամայականություն ու բանություն, գաղութային ստրկություն ու ազգային իրավապարբեկություն, վերջապես, «քաղաքակիրթ» աղեքերի պայքարը միմյանց դեմ՝ «անքաղաքակիրթ» ժողովուրդների վրա իշխելու համար—սրանք են այն ձեռքը, վորոնց չըջանակնելում ընթացել և ժողովուրդների տնտեսական մերձեցման պրոցեսը։ Ուստի և՝ միավորման տենդենցի հետ մեկտեղ աճում եր այդ միավորման բռնի ձեռքը վոչնչացնելու տենդենցը, աճում եր ճնշված գաղութները և կախյալ ազգություններն իմացերի լիստական ճնշումից ազատագրելու պայքարը։ Վորքան վոր այդ յերկրորդ տենդենցը ճնշված մասսաների ըմբոստացում եր նշանակում ընդդեմ միավորման իմացերի լիստական ձեռքի, վորքան վոր դա ժողովուրդների միավորում եր պահանջում՝ համագործակցության ու կամավոր միության սկզբունքներով, դա յեղել և մնում է առաջադիմական տենդենց, վորովհետև դա հոգեկան նախադրյալներ և նախապատաստում ապագա համաշխարհային սոցիալիստական տնտեսության համար։

3) Կապիտալիզմի հատուկ ձևերով արտահայտված այս յեր-
կու հիմնական տենդենցիների պայքարը լցնում է բազմազգ բուր-
ժուական պետությունների վերջին կես հարյուրամյակի պատմու-
թյունը։ Կապիտալիստական զարգացման շրջանակներում այդ
տենդենցիների միջև յեղած անհաջող հակասությունը դրված է յե-
ղել բուրժուական գաղութային պետությունների ներքին անզո-
րության ու որգանական անկայունության հիմքում։ Անխուսափելի
կոնֆլիկտներ արդպիսի պետությունների ներսում ու անխուսա-
փելի պատերազմներ այդպիսի պետությունների միջև։ Հին գա-
ղութային պետությունների քայլքայում և նորերի գոյացում։ գա-
ղությների նոր հետամտում ու բազմազգ պետությունների նոր
քայլքայում, վորը տանում է դեպի աշխարհի քաղաքական քարտեզի
նոր վերաձևումը—սրանք են այս հիմնական հակասության ար-
դյունքները։ Մի կողմեց՝ հին Ռուսաստանի, Ավստրո-Հունգա-
րիայի, Թյուրքիայի քայլքայումը, մյուս կողմեց՝ այնպիսի գա-
ղութային պետությունների պատմությունը, ինչպիսիք են Մեծ
Բրիտանիան և հին Գերմանիան, վերջապես, իմպերիալիստական
մեծ պատերազմը և գաղութային ու իրավապակառ ժողովուրդ-
ների հեղափոխական շարժման աճումը—այս բոլոր և սրբազն նման

Այսպիսով, ժողովուրդների տնտեսական միավորման պրոցեսը
ու այդ միավորման խմբերի համար լինելու համար անհնարինությունը՝ պայմանավորել ե բուրժուազիայի զած անհաշտ հակասությունը՝ պայմանավորել ե բուրժուազիայի անընդունակությունը, անողնականությունը, անզորությունը՝ գտնելու ազգային հարցի լուծմանը ճիշտ կերպով մոտենալու ձևը։

4) Մեր կուսակցությունը հաջի յե առևլ այդ ները՝ գնելով ազգային հարցի վերաբերյալ իր քաղաքականության հիմքում ազգերի ինքնորոշման իրավունքը, ժողովուրդների պետական ինքնուրույն դոյլության իրավունքը: Իր գոյության տակառին առաջին որերին, իր առաջին համագումարում (1898 թ.), յերբ կապիտալիզմի հակասություններն ազգային հարցի գծով դեռևս սպառիչ պարզությամբ չելին կարողացել վորոշել, կուսակցությունը ճանաչեց ազգությունների այս անհապատելի իրավունքը: Հետազայում, ըստհուազ մինչև Հոկտեմբերյան հեղաշրջումը, իր համագումարներում ու կոնֆերենցիաներում կայացրած հատուկ վորոշումներով ու վճիռներով նաև անփոփոխորեն հաստատել ե իր ազգային ծրագիրը: Խմբերի ամսական պատերազմն ու նրա հետ կապված հեղափոխական հուժկու շարժումը գաղութներում միայն նորից ելին հաստատում կուսակցության վճիռներն ազգային հարցում: Այդ վճիռների իմաստն այն է, վոր՝ ա) վճառապես ժխտվում են հարկադրանքի բոլոր ու ամեն տեսակի կանապես ժխտվում են հարկադրանքի վերաբերմամբ, թ) ճանաչվում են ժողովուրդների հավասարությունն ու սուվերենությունն իրենց բարձրություններու գործում, դ) ճանաչվում ե այն դրույթը, թե ժողովուրդների հավասարությունն ու սուվերենությունն իրենց բարձրություններու գործում, դ) ճանաչվում ե այն ճշմարտությունը, ու կամագուրության սկզբունքներով համագործակցության ու կամագորության սկզբունքներով համացանցումը հետարարություն ե կապիտալի իշխանության տակառը մասն հետևանքով միայն:

Մեր կուսակցությունը իր աշխատանքի մեջ ազդային այս ա-
ղատադրական ծրագիրը չի գաղաքրել Հակաբըլու ինչպես ցա-
րվագիր բացահայտ-կեղեքիչ քաղաքականությանը, այնպես եւ մեն-
չեմ ինքը ու եսերների թերատ, կիսակիմպերիսալիստական քաղա-
քականությանը։ Յեթե ցարիզմի ռուսացման քաղաքակա-
նությունը ցարիզմի ու Հին Ռուսաստանի ազգությունների միջև
անզունդ ստեղծեց, իսկ մենչեւիկների ու եսերների կիսակիմպե-
րիսալիստական քաղաքականությունը հանդեցրեց այն բանին, վոր

այդ աղքությունների լավագույն տարրերը հեռացան կերենչինացից, ապա մեր կուսակցության ազատագրական քաղաքականությունը կուսակցության համար նվաճեց այդ աղքությունների լայն մասսաների համակրանքն ու աշակցությունը՝ ցարդիմի ու իմպերիալիստական ոռուսական բուրժուազիայի ղեմ մեր կուսակցության մղած պայքարում։ Հաղիվ թե կարելի յե կասկածել այն, մասին, վոր այս համակրանքն ու այս աշակցությունը հանդիսացան այն վճռողական մոմենտներից մեկը, վորոնք վորոշեցին մեր կուսակցության հաղթությունը հոկտեմբերյան որերին։

5) Հոկտեմբերյան հեղափոխությունը տվեց մեր կուսակցության վճիռների գործնական հանրագումարներն աղդային հարցի վերաբերմամբ։ Տապալելով կալվածատերերի ու կապիտալիստների, աղդային ճնշման հիմնական կրողների իշխանությունը և իշխանության գլուխ կանոնեցնելով պրոլետարիատը՝ Հոկտեմբերյան հեղափոխությունը մի հարվածով կարատեց աղդային ճնշման շղթաները, շուրջ տվեց ժողովուրդների միջև յեղած հին հարաբերությունները, խախտեց աղդային։ Հին թշնամությունը, մաքրեց հողը ժողովուրդների համագործակցության համար և վոչ միայն Ռուսաստանում, այլև Յեվրոպայում ու Ասիայում ռուսական պրոլետարիատի համար նվաճեց նրա այլազդի յեղբայրակիցների վատահությունը։ Հաղիվ թե հարկ կա ապացուցելու, վոր ռուսական պրոլետարիատն առանց այսպիսի վատահության չեր կարողանա հաղթել կոչչակին ու Դենիկինին, Յուդենիչին ու Վրանդելին։ Մյուս կողմից, անկասկած ե, վոր ճնշված աղդերն ել չելին կարողանա իրենց ազատազրմանը հասնել՝ առանց Ռուսաստանի կենտրոնում պրոլետարիատի դիկտատուրա հաստատվելու։ Աղդային թշնամանքն ու աղդային ընդհարումները անխուսափելի, անխփանելի յեն, քանի կապիտալն ե իշխանության գլուխ կանոնած, քանի նախկին «պետական» աղդի մանը բուրժուազիան, և ամենից առաջ գյուղացիությունը, նացիոնալիստական նախապաշտամունքներով լեցուն լինելով՝ կապիտալիստների հետեւ են դնում, և, ընդհակառակը, աղդային խաղաղությունն ու աղդային աղաւատությունը կարելի յե ապահովված համարել, յեթե գյուղացիությունն ու մանր-բուրժուական այլ շերտերը պրոլետարիատի հետեւ են դնում, այսինքն՝ յեթե ապահովված ե պրոլետարիատի դիկտատուրան։ Ուստի և՝ խորհուրդների հաղթությունը և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումն այն բաղան, այն հիմքն են, վորի վրա կարող ե կառուցվել ժողովուրդների յեղ-

բայրական համագործակցությունը պետական միասնական միության մեջ։

6) Բայց Հոկտեմբերյան հեղափոխության արդյունքները չեն սպառվում աղդային ճնշման վոչնչացմամբ, ժողովուրդների միավորման համար հող ստեղծելով։ Հոկտեմբերյան հեղափոխությունն իր զարգացման ընթացքում այդ միավորման ձևերն ել մշակեց, նշեց հիմնական այն գծերը, վորոնցով պետք ե կառուցվել ժողովուրդների վորպես միութենական մի պետություն միավորվելը։ Հեղափոխության առաջն շրջանում, յերբ աղդությունների աշխատավոր մասսան անդամ իրենց զգացին աղդային ինքնուրույն մեծություններ, մինչդեռ ռոտարերկրյա ինտերվենցիայի ապանալիքը տակավին իրական վտանգ չեր ներկայացնում, ժողովուրդների համագործակցությունը ղեկուս չուներ միանդամայն վորոշ, խատորեն հաստատված ձև։ Քաղաքացիական պատերազմի ու ինտերվենցիայի շրջանում, յերբ աղդային հանրապետությունների ռազմական ինքնապաշտպանության շահերը առաջն պլանի վրա եյն դրվել, այնինչ տնտեսական շինարարության հարցերը տակավին հերթական չելին, — համագործակցությունը ուղղվեց տնտեսական միությամբ։ Աղդային հանրապետությունների վորպես Խորհրդային Հանրապետությունների Միություն միավորվելը համագործակցության ձևերի զարգացման ավարտման ետապն ե, վորն այս անդամ ընդունեց ժողովուրդների վորպես խորհրդային բազմազդ միասնական սկետություն ռազմա-տնտեսական և քաղաքականապես միավորվելու բնույթ։

Այսպիսով, պրոլետարիատը խորհրդային հասարակակարգում գտավ աղդային հարցի ճիշտ լուծման բանալին, նա զրա մեջ հայտնագործեց աղդային իրավահայլասարության ու կամավորության սկզբունքների վրա հիմնված կայուն բազմազդ պետություն կազմակերպելու ուղին։

7) Բայց գտնել աղդային հարցի ճիշտ լուծման բանալին՝ տակավին չի նշանակում լիովին լուծել այն և վերջնականապես սպառել այդ լուծումը նրա կոնկրետ-գործնական իրականացումով։ Հոկտեմբերյան հեղափոխության առաջնապետական համար անհրաժեշտ է նաև հաղթարբի ճիշտ կենսագործման համար անհրաժեշտ է նաև հաղթարբել այն արգելքները, վորոնք մեզ ժառանգություն են

տրված աղքային ձնչման անցած շրջանից և վորոնք չեն կարող հաղթահարվել մի հարվածով՝ կարճ ժամանակամիջոցում:

Այդ ժառանգությունը կազմում են, նախ, մեծապետական չովինիզմի մնացուկները, չովինիզմի, վորը վելիկուուսների յերբեմնի արտօնյալ դրության արտացոլումն ե: Այդ մնացուկները տակավին ապրում են մեր կենտրոնական և տեղական խորհրդային աշխատողների գլուխներում, դրանք բուն են դրել մեր կենտրոնական և տեղական պետական հիմնարկներում, դրանց ամրացնելու յեն դալիս վելիկուուսական-չովինիստական «նոր» սմբնովեխովյան հովերը, վորոնք նեալի կապակցությամբ ավելի ու ավելի յեն ուժեղանում: Դրանք գործնականապես արտահայտում են ոռու խորհրդային չինովնիկների սնապարծ-արհամարհական և անհոգի-բյուրոկրատական վերաբերմունքով դեպի աղքային հանրապետությունների կարիքներն ու պահանջները: Բազմազդ խորհրդային պետությունն իրոք հաստատուն, իսկ ժողովուրդների համագործակցությունը նրանում իրոք յեղայրական կարող են դառնալ լոկ այն դեպքում, յեթե մեր պետական հիմնարկների պրակտիկայում այդ մնացուկները վճռապես ու անդառնալիորեն ջնջեն: Դրությունը մի շարք աղքային հանրապետություններում (Ուկրաինա, Բելոռուսիա, Աղրբեջան, Թուրքիստան) նրանով ե բարդանում, վոր խորհրդային իշխանության հիմնական հենարանը հանդիսացող բանվոր դասակարգի նշանակելի մասը պատկանում է վելիկուուս աղոփությանը: Այդ շրջաններում քաղաքի ու գյուղի, բանվոր դասակարգի ու գյուղացիության զոդումը ուժեղագույն արգելքների յե հանդիպում՝ թե՛ կուսակցական և թե՛ խորհրդային որդաններում յեղած վելիկուուսական չովինիզմի մնացուկների կողմից: Այս պայմաններում ոռուսական կուլտուրայի առավելությունների մասին յեղած խոսակցությունները և այն դրույթի առաջադրումը, թե ոռուսական ամելի բարձր կուլտուրան անխուսափելիորեն հաղթելու յե ամելի հետամնաց ժողովուրդների կուլտուրաներին (ուկրաինական, աղրբեջանական, ուզբեկական, կիրդիղական և այլն), վոչ այլ ինչ են, բայց յեթե վելիկուուս աղոփության տիրապետությունն ամրապնդելու փորձ: Ուստի և՝ վելիկուուսական չովինիզմի մնացուկների դեմ վճռական պայքար մղելը մեր կուսակցության առաջին հերթական խնդիրն ե:

Այդ ժառանգությունը, յերկրորդ, կազմում ե Հանրապետությունների Միության աղդությունների փաստական, այսինքն՝ տնտեսական ու կուլտուրական անհավասարությունը: Չոկ-

տեմբերյան հեղափոխության ձեռք բերած աղդային իրավահավասարությունը ժողովուրդների մեծ նվաճում և հանդիսանում, բայց այն ինքնին չի լուծում ամբողջ աղդային հարցը: Մի շարք հանրապետություններ ու ժողովուրդներ, վորոնք չեն անցել կամ դրեթե չեն անցել կապիտալիզմի բովով, վորոնք չունեն կամ դրեթե չունեն իրենց պրոլետարիատը, վորոնք այդպատճառով ել հետ են մնացել տնտեսական ու կուլտուրական տեսակետից, առանց դրսից իրական ու տեսական ողնությունն ստանալու ի վիճակի չեն լիովին ոգտագործելու այն իրավունքներն ու հանրապետությունները, վոր նրանց ընձեռում և ազդային իրավահավասարությունը, ի վիճակի չեն բարձրանալու զարդացման ավելի բարձր աստիճանը և այսպիսով հասնելու առաջնացած աղդություններին: Փաստական այս անհավասարության պատճառները թաղնված են վոչ միայն այս ժողովուրդների պատմության մեջ, այլև ցարիզմի ու ոռուսական բուրժուազիայի քաղաքականության մեջ, վորոնք ձգտել են ծայրամասերը զարձնելու արդյունաբերական զարդացմած կենարոնական շրջանների կողմից շահագործվող բացառապես հումքային շրջանները: Անկարելի յե կարճ ժամանակամիջոցում հաղթահարել այս անհավասարությունը, մի յերկու տարում վերացնել այս ժառանգությունը: Մեր կուսակցության դեռևս X համագումարը նշել ե, վոր «փաստական աղդային անհավասարության վոչնչացումը տեսական պրոցես ե, վոր պահանջում և համառորեն և հաստատակամորեն պայքարել աղդային ճնշման ու դաղությային ստրկության բոլոր մնացուկների դեմ»: Բայց անպատճառ հարկավոր ե հաղթահարել այն: Յեկ այն կարելի յե հաղթահարել միայն ոռու պրոլետարիատի կողմից իրական ու տեսական ողնություն ցույց տալով Միության հետամնաց ժողովուրդներին՝ նրանց տնտեսական ու կուլտուրական առաջադիմության դործում: Այս ողնությունն առաջին հերթին պետք ե արտահայտվի առաջներում ճնշված աղդությունների հանրապետություններում արդյունաբերական ոչափիներ ստեղծելու համար մի շարք գործնական միջոցներ ձեռք տոնելով՝ առավելագույն չափով դորձի մեջ դրավելով տեղական բնակչությունը: Վերջապես, այս ողնությունը, X համապատասխան բանաձեռ պետք ե ընթանա այն գումարի բանաձեռի համաձայն, զուգածեռ պետք ե ընթանա այն պայքարին, վոր աշխատավոր մասսաները մղում են իրենց սոցիալական դիրքերի ամրապնդման համար՝ նեալի կապակցությամբ ուժեղացող տեղական ու յեկվոր շահագործողական վերնախավերի դեմ: Վորքան վոր այդ հանրապետություններն ա-

սավկելապես գյուղատնտեսական շրջաններ են, ներքին սոցիալական միջոցառումները պետք ե ամենից առաջ ընթանան աշխատավորական մասսաներին ի հաշիվ պետական ազատ Փոնդի հողականացնելու հանապարհով։ Առանց այս բանի հիմք չկա հույս գնելու միութենական միասնական պետության շրջանակներում ժողովուրդների կանոնավոր ու հաստատուն համագործակցությունը կարգավորելու վրա։ Ուստի և՝ ազգությունների փաստական անհավասարությունը վերացնելու պայքարը, հետամնաց ժողովուրդների կուլտուրական ու տնտեսական մակարդակը բարձրացնելու պայքարը մեր կուսակցության յերկրորդ հերթական խնդիրն եւ :

Այս ժառանգությունը, վերջապես, կազմում են նացիոնալիզմի մնացուկները մի ամբողջ շարք ժողովուրդների մեջ, փորոնք կրել են ազգային ճնշման ծանր լուծը և տակապին չեն կարողացել ազատագրվել ազգային հին վիրավորանքների զգացումից: Այդ մնացուկների գործնական արտահայտությունն են հանդիպանում առաջներում ճնշված ժողովուրդների ազգային վորոշխորթացածությունը և լիակատար վստահության բացակայությունը դեպի այն միջոցառումները, վորոնք ուսուներից են գալիս: Սակայն, իրենց կազմի մեջ միքանի ազգություններ ունեցող հանրապետություններում այս պաշտպանողական նացիոնալիզմը համախի վերածվում է հարձակողական նացիոնալիզմի, ավելի ուժեղ ազգության թունդ շովինիզմի, վոր ուղղված է այդ հանրապետությունների թույլ ազգությունների դեմ: Վրացական շովինիզմը (Վրաստանում), վոր ուղղված է հայերի, ոսերի, աջարացիների ու արխազների դեմ, աղբբեջանական շովինիզմը (Աղբբեջանում), վոր ուղղված է հայերի դեմ, ուղբեկական շովինիզմը (Բուխարայում ու Խորեզմում), վոր ուղղված է թուրքմենների ու կիրգիզների դեմ, հայկական շովինիզմը և այլն, — շովինիզմի այս բոլոր տեսակները, վորոնց, այն ելասած, իրախուսում են նեպի ու կոնկուրենցիայի պայմանները, մեծագույն չարիք են, վորոնք սպառնում են միքանի ազգային հանրապետություններ դարձնել զգգողցի ու խառնակչության ասպարեզ: Ինչ ասել կուզի, վոր այս բոլոր յերեսույթներն արգելակում են ժողովուրդների փաստական միավորումը վորպես միասնական պետական միություն: Վորքան վոր նացիոնալիզմի մնացուկները հանդիսանում են վելիկուուսական շովինիզմից պաշտպանվելու յուրահատուկ մի ձև, վելիկուուսական շովինիզմի դեմ վճռական պայքար մղելը ամե-

նահատակառն միջոցն և նացիոնալիստական մնացուկները հաղթահարելու համար : Իսկ վորքան վոր այդ մնացուկները վերածվում են տեղական չովինիզմի, վորն առանձին հանրապետություններում ուղղված ե աղքային թույլ խմբերի ղեմ, ուղղակի պայքարն այդ մնացուկների ղեմ կուսակցության անդամների պարտականությունն ե : Ուստի և՝ նացիոնալիստական մնացուկների և, ամենից առաջ, այդ մնացուկների չովինիստական ձևերի ղեմ պայքարելու մեր կուսակցության յերրորդ հերթական խնդիրն է :

8) Հնի ժառանգության ամենացայտուն արտաշայությունը՝ ներկա մեկը պետք է համարել այն փաստը, վոր կենտրոնում և տեղերում խորհրդային չինովնիկների մի մասը Հանրապետությունների Միությունը գնահատում է վո՞չ թե իրեն պետական հավասար միավորների մի միություն, վորը կոչված է ապահովելու ազգային հանրապետությունների ազատ զարգացումը, այլ իրեն մի քայլ գեղի հանրապետությունների վերացումը, իրեն այսպես կոչված «միասնական-անբաժանելին» կազմելու սկիզբ:

Հնի ժառանգության մի այսպիսի արդյունքնել պետք է ամ-
մարել ԱՄՓԽՀ զերատեսչություններից վոմանց ձգտումը՝ ի-
րենց յենթարկել ավտոնոմ հանրապետությունների ինքնուրույն
կոմիսարիատները և այդ հանրապետությունները վերացնելու ճա-
նապարհ հարթել:

Գատապարտելով այդպիսի ըմբռնումը իրբե հակապրոլիտա-
րական ու ռեակցիոն ըմբռնում և հոչակելով ազգային հանրապե-
տությունների գոյության ու հետագա զարգացման բացարձակ
անշրջաժեշտությունը՝ համագումարը կոչ է անում կուսակցության
անդամներին աշալուրջ հետեւելու այն բանին, վորպեսզի հանրա-
պետությունների միավորումը և կոմիսարիատանների միաձուլումը
շովինիստորեն արամադրված խորհրդային չինովինիկները չողուա-
զործեն՝ իրեւ ազգային հանրապետությունների տնտեսական ու
կուլտուրական կարիքներն անտեսելու իրենց փորձերի քողարկում։
Կոմիսարիատանների միաձուլումը մի քննություն է խորհրդային ա-
պարատի համար, յեթե զործնականում այս փորձը մեծապետա-
կան ուղղություն ստանար, ապա կուսակցությունը ստիպված
պետք է լիներ այսպիսի աղջատման դեմ ձեռք տանելու ամենաո-
վագական միջոցներ՝ ընդհուպ մինչև միքանի կոմիսարիատանների
միաձուլումը վերացնելու հարցի դրումը՝ մինչև վոր խորհրդային
պարատն առաջիկայում պատշաճ կերպով վերադաստիարակվի
իսկապես պրոլետարական և խկապես յեղայրական ուշադրու-

թյան վորով դեմքի վորքը ու հետամնաց ազգությունների կարիք-ները և պահանջները:

9) Հանրապետությունների Միությունը, վոր ստեղծված և առանձին հանրապետությունների բանլորների ու գյուղացիների հավասարության և կամավորությունների սկզբունքներով, հանդիսանում և պրոլետարիատի առաջին փորձը՝ անկախ յերկիրների միջազգային փոխհարաբերությունների կարգավորման դործում և առաջին քայլը՝ ապագա Աշխատանքի Համաշխարհային Խորհրդային Հանրապետության ստեղծման ուղղությամբ: Վորքան վոր Հանրապետությունների Միությունը ժողովուրդների համակեցության նոր ձև, միասնական միութենական պետության մեջ նրանց համագործակցելու մի նոր ձև, այն պետության, վորի շրջանակներում սեփակ և վերացվեն վերը ուրվադժված մնացուկները ժողովուրդների միատեղ աշխատանքի պրոցեսում, —Միության բարձրագույն որդանները այնպես պետք են կառուցված լինեն, վորպեսզի լիովին արտացոլեն Միության բոլոր ազգությունների վո՛չ միայն ընդհանուր կարիքներն ու պահանջները, այլև առանձին աղջությունների հատուկ կարիքներն ու պահանջները: Ուստի և՝ Միության գոյություն ունեցող կենտրոնական որդանների հետ միասին, վորոնք ամբողջ Միության աշխատավոր մասսանների ներկայացուցչությունն են հանդիսանում՝ անկախ աղջությունից—հավասարության սկզբունքներով պետք և ստեղծի ազգությունների ներկայացուցչության մի հատուկ որդան: Միության կենտրոնական որդանների այսորինակ կառուցումը լիակատար հնարավորություն կտար զգայուն կերպով ունկըրելու ժողովուրդների կարիքներին ու պահանջներին, իր ժամանակին ցույց տալու նրանց տնհաժեշտ ովնություն, ստեղծելու լիակատար փոխադարձ վատահության իրադրություն և, այսպիսով, ամենաանհիմանդապին միջոցներով վերացնելու վերը հիշված ժառանգությունը:

10) Ծելնելով ասվածից, համազումարը հանձնարարում է կուսակցության անդամներին հասնելու, իբրև գործնական միջոցների, այն բանին, վորպեսզի՝

ա) Միության կենտրոնական որդանները կառուցելիս տպահոված լինի առանձին հանրապետությունների իրավունքների ու պարտականությունների հավասարությունը՝ ինչպես նրանց փոխադարձ հարաբերությունների մեջ, այնպես ել Միության կենտրոնական իշխանության նկատմամբ.

բ) Միության բարձրագույն որդանների սիստեմում հավա-

սարության սկզբունքներով հիմնվի առանց բացառության բոլոր ազգային հանրապետությունների ու ազգային մարդկաների ներկայացուցչության մի հատուկ մարմին՝ ըստ կարելույն հաշվի առնելով այդ հանրապետությունների կազմի մեջ մտնող բոլոր աղջությունների ներկայացուցչությունը.

գ) Միության գործադիր որդանները կառուցվեն այնպիսի սկզբունքներով, վորոնք ապահովում են հանրապետությունների ներկայացուցիչների իրական մասնակցությունը նրանց մեջ և Միության ժողովուրդների կարիքների ու պահանջների բավարումը.

դ) Հանրապետություններին ընձեռվեն բավականաչափ լայն Փինանսական և մասնավորապես բյուջեական այնպիսի իրավունքներ, վորոնք ապահովեն նրանց սեփական պետական-վարչական, կուլտուրական ու տնտեսական ձեռներեցության ցուցաբերման հնարավորությունը.

ե) ազգային հանրապետությունների ու մարզերի որդանները կառուցվեն առավելագույն համապատասխան ժողովուրդների լեզուն, կենցաղը, բարքերն ու սովորությունները գիտեցող տեղացիներից.

դ) Հրատարակվեն հատուկ որենքներ, վորոնք ապահովեյին մայրենի լեզվի գործածությունը բոլոր պետական այն որդաններում և բոլոր այն հիմնարկներում, վորոնք սպասարկում են տեղական այլազգի բնակչությունը և ազգային փոքրամասնությունները, որենքներ, վորոնք հեղափոխական ամբողջ խստությունները, պահանջին հարաբերությունների և թյամբ հետապնդում և պատժում են ազգային իրավունքների բովանականդ ազգային փոքրամասնությունների իրավունքների բոլոր խախտիչներին.

է) ուժեղացվի կարմիր բանակում դաստիարակչական աշխատանքը՝ Միության ժողովուրդների յեղբայրության և համերաշխության գաղափարները արմատավորելու վոգով և գործնական միջոցառումներ ձեռք առնելին՝ ազգային զորամասեր կազմակերպելու վերաբերմամբ՝ պահպանելով այն բոլոր միջոցները, վորոնք անհրաժեշտ են հանրապետությունների լիակատար պաշտպանությունն ապահովելու համար:

II

1) Մեր կուսակցության կազմակերպությունների զարգացումն ազգային հանրապետությունների մեծամասնության մեջ

ընթանում ե այնպիսի պայմաններում, վորոնք լիովին չե, վորոնպատում են նրանց աճմանն ու ամրացմանը: Այս հանրապետությունների տնտեսական հետամնացությունը, ազգային պրոլետարիատի փոքրաթիվ լինելը, տեղացի կուսակցական հին աշխատողների կաղըերի պակասությունը կամ նույնիսկ բացակայությունը, մայրենի լեզվով լուրջ մարքսիստական գրականության բացակայությունը, կուսդաստիարակչական աշխատանքի թուլությունը, վերջապես, արմատական-ազգայնական տրադիցիաների մնացուկների առկայությունը, տրադիցիաներ, վորոնք դեռևս չեն վերացել, — տեղացի կոմունիստների մեջ վորոշ թեքում են առաջացրել ազգային առանձնահատկությունները գերազահատելու ուղղությամբ, պրոլետարիատի դաստկարգային շահերը թերագնահատելու ուղղությամբ, թեքում դեպի նացիոնալիզմը: Այս յերեսույթը առանձնապես վտանգավոր է դառնում մի քանի ազգություն ունեցող հանրապետություններում, վարտեղնա հաճախ ընդունում է ավելի ուժեղ ազգության կոմունիստների գեպի չովինիզմը կատարվող թեքման ձև, մի թեքում, վորոնը սուր ծայրով ուղղված է թույլ ազգությունների կոմունիստների գեմ (Վրաստան, Աղբեջան, Բուխարա, Խորեզմ): Դեպի նացիոնալիզմը յեղող թեքումը վնասակար է այն տեսակետից, վորնա, արգելակելով ազգային բուրժուազիայի գաղափարային ազգեցությունից ազգային պրոլետարիատի ազատվելու պրոցեսը՝ դժվարացնում է տարբեր ազգությունների պրոլետարների համախմբումն իրեն միասնական ինտերնացիոնալ կազմակերպություն:

2) Մյուս կողմից, ոռւսական ծագում ունեցող կուսակցական հին աշխատողների բարձաքանակ կաղըերի առկայությունն ինչպես կուսակցության կենտրոնական հիմնարկներում, այնպես ել ազգային հանրապետությունների կոմկուսների կազմակերպություններում, կուսաշխատողներ, վորոնք ծանոթ չեն այդ հանրապետությունների աշխատավորական մասսաների բարքերին, սովորույթներին ու լեզվին և այդ պատճառով ել միշտ չե, վորոնք այսուն են դեպի նրանց կարիքները, — մեր կուսակցության մեջ թեքում է առաջացրել կուսակցական աշխատանքում ազգային առանձնահատկություններն ու ազգային լեզուն թերագնահատելու ուղղությամբ, առաջացրել է գոռող-արհամարհական վերաբերմունք գեպի այդ առանձնահատկությունները, թեքում դեպի վելիկոուսական չովինիզմը: Այս թեքումը վնասակար է վորոնը այն պատճառով, վոր այն, արգելակելով ազգային լեզուն իմացող տեղացիներից կոմունիստական կազմեր կազմելու դու-

տությունների սլրողետարական մասսաներից կտրվելու վտանգ, այլև, ամենից առաջ, այն պատճառով, վոր դա սնում ու աճեցնում է վերը ուրվագծված թեքումը դեպի նացիոնալիզմ՝ դժվարացնելով նրա դեմ պայքարելը:

3) Դատապարտելով այդ յերկու թեքումն ել, վորպես կոմունիզմի գործի համար վնասակար ու վտանգավոր թեքումներ, կուսակցության անդամների ուշադրությունը դարձնելով այն հատուկ վնասակարության ու հատուկ վտանգավորության վրա, վոր ունի դեպի վելիկոուսական չովինիզմը յեղած թեքումը, համագումարը կոչ է անում կուսակցությանը՝ շուտակությունը կերպով վերացնելու մեր կուսակցական շինարարությունից հնի այդ մնացուկները:

Համագումարը համձնարարում է Կենտկոմին կիրառել վորպես գործնական միջոցներ՝

ա) ազգային հանրապետությունների տեղացի կուսակցական աշխատողներից բարձր տիպի մարքսիստական խմբակներ կազմելը.

բ) սկզբունքային մարքսիստական գրականությունը մայրենի լեզվով գարգարցնելը.

գ) Արևելքի ժողովուրդների համարարանը և նրա տեղական բաժանմունքներն ուժեղացնելը.

դ) ազգային կոմկուսների կենտկոմներին կից տեղական աշխատողներից հրահանդչական խմբեր ստեղծելը.

ե) մայրենի լեզվով կուսակցական մասսայական գրականություն դարձացնելը.

զ) հանրապետություններում կուսականական աշխատանքն ուժեղացնելը.

է) հանրապետություններում յերիտասարդության մեջ աշխատանքն ուժեղացնելը:

գ) Նկատի ունենալով այն հակայական նշանակությունը, վորոնի պատասխանատու աշխատողների գործունեյությունը ավտոնոմ ու անվիճակ հանրապետություններում և առհասարակ ծայրամատերում (տվյալ հանրապետություն աշխատավորության բամբական ամբողջ մնացած Միության աշխատավորության հետ իկան ամպող կերպության հանդիսավոր կերպության հանդիսավոր կերպության հանդիսավոր կերպության մասնել այդ աշխատողների առանձնապես ուշադիր ընտրության մասն այն նկատառությունը, վոր նրանց կազմը լիովին ապահովի կուսակցության վճիռների իրական կենսագործումը ազգային հարցի վերաբերմաբ:

ԾԱՌԱՄԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Դաշնակթերը—«Դաշնակցություն» կուսակցությունը—հայկական մանր-բուրժուական նացիոնալիստական կուսակցություն և, վորը ծագել է 90-ական թվականների սկզբներին, ըստ իր ծրագրի հարում եր ոռոսական ևսերներին։ Ռեակցիայի և սպառերազմի տարիներին կատարում եր հայ բուրժուակայի մարտական ավանդարդի և շարիզմի շահերի պաշտպանի դերը։ 1918—20 թվականներին, կանգնելով տաճկական հրամանատարության ստեղծած Հայաստանի բուրժուական հանրապետության գլուխ՝ դաշնակներն այդ հանրապետությունը դարձրին անդլո-Փառանսական ինտերվենտների և ոռոսական սպիտակ-դպրոցիականների հենակետ՝ խորհրդային իշխանության և կոմկուսի զեմ մըզ-փող պայքարում։ Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո՝ արտասահման գաղթած նրա լիդերները կատաղի պայքար են մզում հորհրդային Հայաստանի զեմ։—18

2 Մուսալարիստները—«Մուսավաֆ» կուսակցությունը—թյուրք բուրժուա-«գեմոկրատական» մի կուսակցություն և, վորը ծագել է 1918 թ. Բաղվում-տուրքած և պանխախմբիզմով ու պանթյուրքիզմով։ 1918 թ. Ադրբեջանում հանդիսացել է հակահեղափոխական գլխավոր ուժը, վորն ապստամբություն երարձացրել Բաղվի կոմունալի զեմ, իրեն սպնության և կանչել թուրքերին, ամելի ուշ՝ անդլիացիներին, և դաժան պայքար ե մղել բանվորական ու զյու-դաշիական շարժման զեմ։ 1920 թ. Ադրբեջանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո կորցրեց իր ազգեցությունը և ներկայումս իր կողմա-կիցներն ունի ինտերվենցիայի համար աշխատող արտասահմանյան եմիլդրանտ-ների մեջ միայն։—18:

Աղդային մոմենտները կուսակցական և պետական շինա-բարության մեջ (Զեկուցում ՌԿ(Բ)Կ XII համադրումարում 1923 թ. ապրիլի 23-ին)	5
Յեղթափակման խոսք	28
Հավելված	
Աղդային մոմենտները կուսակցական և պետական շինա-բարության մեջ (1923 թ. ապրիլին ՌԿ(Բ)Կ XII համա-դրումարի ընդունած բանաձեռը)	35
Ծանոթագրություններ	18



Թարգմ. Պ. Աբելյան
Տեխն. խմբ. Ս Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Զիդեցյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Դւավիթի լիազոր Ի 9706
Հրատ. № 467, պատվեր № 122, տիրաժ 10.000
Հանձնված ե արտադրության 7/VIII 1957 թ.
Ստորագրված ե տպագրելու 15/VIII 1957 թ.
Գիրնը 50 Կ.

Հայկական պատճենաթուղթ, Յերևան, Արագերդյան № 71

04

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եզ	Տակ	Ցպված և	Պետք և կարդալ
11	6 ն.	մասսաները	տարբերը
16	16 ն.	գործողությունների ամբողջ ուժը և պայ- քարի ամբողջ ուժը...	մեր գործողությունների ամբողջ ուժը և մեր
24	5 ն.	140 միլիոն	պայքարի ամբողջ ուժը վոչ պակաս քան, 140 միլիոն
25	16 դ.	նոր	վեր

<<Ազգային գրադարան



NL0184045

ԳԻԱԸ 50 Կ.

И. СТАЛИН
НАЦИОНАЛЬНЫЕ МОМЕНТЫ
В ПАРТИЙНОМ И ГОСУДАРСТВЕННОМ
СТРОИТЕЛЬСТВЕ

Армияздат, Ереван, 1937